ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ,
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ,
ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Զ. ՏԱՐԻ ԻԵ. ՅՈՒՆԻՍ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ.	ԱՑՐԻՒ և նրա կատարեալ տուրքի մասին. Խ. քահ. Խանզադեան.	493
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.	ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ Նկատ. Քաջբ.	511
	ԼԱԶԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍ-ՏԱՆ. Միհրան	520
	ԽՕԼԵՐԻ մաս. Բժ. Մ. Զարգարեանց.	531
ԱԶԳԱՅԻՆ	. . . .	549
ԳՐԱԽՕՍԱԿԱՆՔ.	ԲԱՂՈՒԱԾՔ Սիմօնի օրագ.	556
	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՏՊԱՐԱՆՈՒՄ
ՌՅԽԱ—1892

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

Ա.

ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ

Բ.

ՁԵՌԱՑ ԺԱՄԱԳԻՐՔ

Գ.

ԵՂԻՇԷԻ

ՁԵՌԱԳԻՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՄԱՏԵՑ

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ

ՄԻԱԲԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Զ. ՏԱՐԻ ԻԵ. ՅՈՒՆԻՍ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՌՅԽԱ—1892

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱՄԵՆ. Տ. ՏԵՂԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ։



ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՅՐԻԻ ԵՒ ՆՐԱ ԿԱՏԱՐԵԱԼ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ․

« Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին․ տեսանէր թէ զիարդ
« ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն․ Եւ բազում
« մեծատունք արկին բազում ինչ։ Եկն այրի մի՝ եւ արկ եր-
« կուս լումայս, որ նաքարակիտ մի։ Եւ կոչեցեալ առ ինքն
« զաշակերտսն, ասէ ցնոսա․ Ամէն ասեմ ձեզ՝ զի այրին
« այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին
« ի գանձանակն։ Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց ար-
« կին․ այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն զոր ինչ
« ունէր՝ արկ գոյն չափ զկեանս իւր » (Մարկ․ ԺԲ․ 41—4)։

Եղբայրներ, սքանչելի տեսարան էր ներկայացնում Երուսա-ղէմի տաճարը, երբ ժամերգութիւնը վերջանալուց յետոյ, ժո-ղովուրդը Սիօնի բլրակից ցած էր իջնում, վերադառնալով սուրբ

քաղաքը։ Ահա երգեցողութիւնը դադարեց տաճարում և աղօթողների խառն բազմութիւնը իսկոյն լցնում էին սիւնազարդ սրահները։ Ոչ ոք այս հանդիսաւոր ժողովի ժամանակ բացակայել չէր ցանկանում, որովհետև տաճարը, նա մանաւանդ այն ժամանակուայ հրէաների համար, ոչ միայն կրօնական սրբավայր էր ներկայացնում, բայց և ժողովրդական յիշատակութեանց անցեալ փառքի և յուսոյ ապաստանարան․ Հրէաստանում նա միակ տեղն էր որ աշխարհակալի յանդուգն ձեռքը դեռ ևս խնայել էր։ Երբ Ղևտացիք երգում էին սաղմոսներ և հազարաւոր ձայներ նրանց կրկնում էին, սաստիկ յուզմունքը տիրում էր ժողովրդին որ օտարի ծանր լծի տակ հեծում էր։ Հրէան երազում էր ներքին արհաւիրքներով մօտալուտ ազատութեան մասին, երբ կըկատարուէին բոլոր մարգարէական խոստմունքները․ երբ Երուսաղէմը առաւել մեծ փառքի, առաւել մեծ յարգանքի մէջ կլինի, քան Դաւթի և Սողոմոնի ժամանակ․ երբ ամենահեռաւոր տեղերից կգան ժողովուրդներ՝ իրանց ծառայութիւնը մատուցանելու Տիրոջ տաճարին։ Եւ երբ Հրէան ժողովրդական երկրպագութեան և սրբութեանց պահպանութեան ծառայող գանձանակի մօտով անցնում էր, նա գցում էր այնտեղ մի առանձին, գաղտնի հպարտութեամբ և լի կենդանի յոյսերով, իւր տուրքը, և վերադառնում իւր բնակարանը բարձրագլուխ և գոհունակ սրտով։

Նկարագրած օրերից մէկն էր․ ժողովուրդը ցած էր իջնում տաճարի սանդուղաներից․ առաջին կարգում նկատելի էին փարիսեցիք, դէմքի դաժան սրբայայտութեամբ և բարեպաշտական դիմակը երեսներին։ Հարուստները անցնում էին բազմաթիւ ապաստորների ուղեկցութեամբ և ոսկի, արծաթ հանելով իրանց քսակից, ձգում էին գանձանակի մէջ, ի ցոյց և ի հիացումն ականատես ամբոխի . . . ։ Յանկարծ ամբոխի միջից անցնում է մի խեղճ, տառապեալ կին, հեզիկ, հանդարտիկ քայլերով։ Ո՞վ էր նա․ մենք ոչինչ չգիտենք նրա անցեալի մասին։ Գիտենք միայն, որ նա այրի էր, այսինքն նրա սիրտը փշրուած էր ամենաքնքոյշ մտերմական կապերով հանդերձ, և որ նրա համար բացուել էր մի կեանք՝ լի միայնութեամբ, զրկանքներով։ Այն

ժամանակ, երբ տեսաւ որ իւր մօտից անցնում են մարդիկ որոնք վայելում են ուրիշների սէրն ու յարգանքը. այն ժամանակ, երբ բաղդաւոր՝ ժպիտը շրթունքների վերայ մայրը իւր զաւակներին առաջնորդում էր Տիրոջ նուիրելու, երբ ուրիշները ուրախ սրտով վերադառնում էին իրանց բնակարանները, որտեղ նրանց սպասում էր այնչափ երջանկութիւն, — նա ընթանում էր համրաքայլ, մտածելով որ ոչ ոք նրան չի հանդիպիլ իւր անշուք բնակարանում, և ոչ մի սիրալիր ձայն՝ վերադառնալու ժամանակ նրան չի ողջունիլ . . : Նա այրի էր և աղքատ . . . Աղքատ, այսինքն երկպատիկ այրի, որովհետև մխիթարութիւններ, համակրութիւններ որ առատօրէն շռայլում են հարուստները, տակաւ անգամ հասնում են այն անձանց, որոնք առաւել զգալի կարօտութիւն ունին նրանց մէջ: Նա այրի էր և աղքատ . . . այսինքն նրա գոյութիւնը ապագայում լի էր անընդհատ կռիւներով չքաւորութեան հետ. ծանրատար և դառնալի կռիւ. անօգնական հիւանդութեան ժամանակ, միայնակ մահուան ժամանակ:

Սակայն դուք՝ որ խղճում էք այս ողորմելի կնոջ, անկարող էք նկատել նրա ագդ շորերի տակ այն ներքին ուշադրութիւնը, որով լի է նրա սիրտը. որովհետև նա գտել է Աստուծոյն նրա Տաճարում: Այն ժամանակ, երբ ուրիշները բաւականանում էին մի միայն ձևական երկրպագութեամբ կամ երևակայութեամբ, լի ազգային փառքի մասին ցնորքներով, այն ժամանակ, երբ զոհաբերները մտածում էին փառաց ի փառս բարձրացնել Իսրայէլին, ապացուցանելով Աստուծոյ առաջ, որ նրանք ծառայում են նրանց ներհայեաց, հպարտ և բիրտ համակրութիւններին, — նա սրտով հասկացաւ այն՝ որ յայտնի չէր նոյն իսկ դպիրներին, որոնք նստած էին Մովսէսի աթոռի վերայ. նա հասկացաւ Աստուծոյ սէրն ու գթասրտութիւնը: Երբ Ղևտացիք երգեցողութեամբ փառաբանում էին Իսրայէլի Աստուծոյն, ո̄րպիսի ջերմեռանդութեամբ նա ևս միացնում էր իւր ձայնը նրանց հետ և ո̄րքան մխիթարութիւն էր գտնում սաղմոսի խօսքերի մէջ, «Արի Տէր Աստուած իմ, բարձր եղիցի ձեռն քո

և մի մոռանար զմանկանս . . . Տեսանես դու զնա ի ցաւս. ի տրտմութիւնս հայիս, քեզ թողեալ է աղքատն և որբոյն դու ես օգնական: Զցանկութիւն տնանկաց լուար Տէր, ի պատրաստութիւն սրտից նոցա հայեցաւ ունկն քո: Դատ առնել որբոյն և տնանկի» . . . (Սաղմոս Թ.): Այս բոլորը նա հասկանում էր և ջախջախուած սրտի խորքերից արտահօսում էին այս հրաշալի խօսքերը՝ որպէս նրա երախտագիտութեան բնական արտայայտութիւն:

Բայց տառապեալ կինը ցանկանում էր և գործով արտայայտել իւր երախտագիտութիւնը, որ լի էր նրա սիրտը. նա սրտեռանդն երկրպագութեամբ փառաբանում էր Աստուծոյն. իսկ այս բաւական չէր: Նա նոյնպէս ցանկանում էր իւր նուէրը մատուցանել սրբավայրին և նպաստել Աստուածային տաճարի շինութեան և բարեզարդութեան: Բայց ի՞նչպէս անէր այդ: Աւա՜ղ, նա այնպէս աղքատ է, որ նրա ամբողջ կարողութիւնը երկու լումայի մէջ է կայանում: Ո՜րպէս չնչին է այս գումարը, երբ հարկաւոր է պահպանել վիթխարի շինութիւն և հոյակապութիւն աստուածպաշտութեան մէջ: Երկու լումայով անկարելի է մի աւերեալ քար իւր տեղը դնել, անկարելի է մի փոքր խնկեղէն գնել, մինչև իսկ զոհելու մի տատրակ: Բայց հէնց այս երկու լուման կարող էին այրիին մի փոքր իւղ կամ հաց մատակարարել, մի երկու օր նրա գոյութիւնը պահպանել: Նա նրանց մէջ մեծ կարիք ունէր. որովհետև հազիւ թէ նրա դրութիւնից առաւել անյայտ դրութիւն լինէր, նրա միջոցներից առաւել անյոյս: Բայց ենթադրենք մինչև անգամ՝ որ նա այս աննշան զոհաբերութեամբ կարող էր նպաստել սրբավայրի պայծառութեան, միթէ հէնց նա՞ պէտք է անէր այդ: Չ՛կան արդեօք ուրիշներ, որոնք կարող են առաւել լաւ կատարել այդ: Եւ իւր բոլոր աղքատութեամբ կարո՞ղ էր արդեօք զրկել իրան՝ ունեցած—չունեցածներից: Այս բոլոր մտածմունքները, թերևս փայլեցին և այրիի սրտում՝, բայց նա կանգ չառաւ նրանց վերայ: Հրաժարուելով այն ամենից ինչ որ աշխարհին էր, անընկճելի կերպով գնաց գանձանակի մէջ իւր ողորմելի լումա-

ները *) և բաղդաւոր համարելով իրան իւր նուիրատուութեամբ՝ գնաց իւր բնակարանը, որտեղ նրան սպասում էր աննկարագրելի չքաւորութիւն:

Խեղճ կին. ո՞վ տեսաւ նրան ամբոխի մէջ. ո՞վ նայեց անգամ նրա վերայ այս անուանիների, հարուստների, դպիրների և փարիսեցիների մէջ: Աւա՜ղ. աշխարհը իսպառ մոռացաւ նրան, ինչպէս մոռանում է ամենատեսակ անմռունչ ինքնուրացութիւն և անյայտ զոհեր, որոնք կազմում են այն ամենը, ինչ որ երկրի վերայ — միայն մեծ է և գեղեցիկ: Բայց կար Մէկը, Որը նրան տեսաւ և Որի հայեացքը հետամուտ էր լինում նրան ամենաքընքոյշ զգացմունքով: Սա նա է, Որին ճշմարտութիւն, Աստուծոյ Որդի են անուանում: Նրան նոյնպէս չէ ընդունում ամբոխը, որ գիտէ յափշտակուել միմիայն արտաքին բարձրաբարբառ մեծութեամբ: Երթ ի խաղաղութիւն տառապեա՜լ կին. Նա քեզ տեսաւ .. և այդ հայեացքը բաւական է, որ քո պաշտօնի վարմունքը յիշատակուի այն ժամանակ անգամ, երբ Երուսաղէմից և նրա հոյակապ տաճարից ոչ մի քար չի մնայ: Նա տեսաւ քեզ և օրհնեց, այժմ երթ ի խաղաղութիւն: Թերևս երկրի վերայ դու նրան երբէք չճանաչես, բայց կգայ ժամանակ, երբ վերջացնելով համեստաբարոյ կեանքիդ ասպարէզը, դու նրան կճանաչես յաւիտենական բնակարաններում:

Աշխատենք այժմ, եղբայրներ, Աստուծոյ օգնութեամբ, այս նշանաւոր և սրտաշարժ դէպքից խրատական դաս քաղել:

Տաճարի ելքի մօտ գտնվում էր նուիրատուութեան գանձանակը: Խորին միտքը ծածկուած է այս հասարակ մանրամասնութեան մէջ: Այն է — ամեն ճշմարիտ երկրպագութիւն պէտք է վերջանայ ողջակիզով: Դուք գալիս էք տաճար Աստուծոյն երկրպագելու, Դուք մտաւորապես պէտք է միանաք երկնային հոգևոր զօրութիւնների հետ, որոնք շրջապատում են Նրա

---

*) Լուման յունական պղնձեայ դրամ է. երկու լուման որ հռոմէական պղնձեայ դրամ կոդրանտն է կազմում, արժէ մեր փողով $^{43}/_{80}$ կոպ. այսինքն մի փոքր աւելի $^{1}/_{2}$ կոպէկից.

գահը, և նրանց հետ ի միասին փառաւորել նրա մեծութիւնն ու սրբութիւնը։ Ահա սրա մէջն է ձեր իսկական ծառայութիւնը և կոչումը։ Որանով դուք մաքրում — սրբում էք ձեր բերաններըդ, որ յաճախ պղծում էք դատարկ, թեթևամիտ և զազիր խօսքերով։ Դուք պարտաւոր էք խոնարհիլ նրա առաջ, Որի աչքերը չափազանց մաքուր են, չարութիւնը տեսնելու համար։ Դուք պարտաւոր էք բանալ նրան ձեր սիրտը, պատմել նրան ոչ միայն ձեր յայտնի չարագործութիւնները բայց և բոլոր գաղտնածածուկ յանցանքները, զգալ ձեր ոչնչութիւնը, որ կարողանաք նուիրել նրան այն փշրուած սիրտը, որին նա երբէք չէ մերժում։ Դուք պէտք է հասկանաք այն փրկարար շնորհը, որ Աստուած պարգևել է ձեզ․ ծունկ խոնարհեցնել Փրկչի առաջ, Որին նա ուղարկեց ձեզ համար։ Ցնծալ ու երգել նրա փառքը։ Աստուած պահանջում է մեզանից մի միայն այս տեսակ երկրպագութիւն և այս տեսակ խնկարկութիւն է միայն նրան հաճելի։ Բայց եթէ դուք կատարելով հեզութեամբ ներշնչուած այս երկրպագութիւնը որին ուղեկից լինէր և գթասրտութեան գործեր՝ դուք դրանով կմտածէք որ ձեր պարտքը բաւականաչափ հատուցիք Աստուծոյն, եթէ բոլոր ներքին ուրախութիւններն ու հրճուանքները, արտասուքներն ու աղօթքները ոչինչ ողջակէզ չեն արտադրիլ, ձեր արտաքին երկրպագութիւնը ի զուր կանցնի, որովհետև Աստուած մերժում է նրան։

Ի վերջոյ այսր ամենայնի, այս միտքը այն աստիճան խորին գծերով տպաւորուած են մարդկանց իմացականութեան մէջ, որ նրա մասին վկայում է իւրաքանչիւր կրօն։ Ամենուրեք, տաճարի հետ միասին դուք կգտնէք զոհաբերութեան սեղան․ մի և նոյն է, արդեօք նա քանդակուած կլինի մարմարիոնից և ոսկուց արհեստական ձեռքով, թէ երկու — երեք քարերից յօրինած, որ վայրենին բարձրացնում է անապատում, հնազանդուելով անպարտելի բնածին ազդմունքներին, իւր արինաշաղախ զոհը մատուցանելու նրանց վերայ։ Զոհ․ ահա իւրաքանչիւր կրօնի կենդրոնը և երբ նա երևան է գալիս բաւականութիւն տալու

այս ներքին օրէնքին, որով առաջնորդւում է մարդս, ձեզ յայտնի է որ այդ տեսակ մարդը ոչինչ բանի առաջ յետ չէ նահանջում: Նա զոհում է Աստուածութեան ամեն բան, ինչ որ նրա համար ամենաթանկագին է, բացառութիւն չկազմելով ոչ զաւակներին, ոչ իրան: Բանականութիւնը անկարող է պատերազմել այս ներքին ստիպողականութեան հետ, որի արմատները շատ խորն են: Այս բանը շատ լաւ հասկանում էին հեթանոս ժողովուրդներն անգամ: Երբ ես տեսնում եմ արեան հեղեղներ, ամենուրեք միախառնուած աղօթքի հետ, ես սարսափում եմ. բայց և այս զարհուրելի մոլորութիւնների մէջ ես խոստովանում եմ զոհի հարկաւորութիւնը: Այս քստմնելի զենումներով մարդս իրան պարտաւոր է ճանաչում Աստուծոյն:

Եւ այսպէս, զոհի հարկաւորութիւնը, որ երբէք չէ անյայտացել մարդկային իմացականութիւնից, քրիստոնէութիւնը ամբողջում է առաւել մեծ ուժով: Ի՞նչ է ներկայացնում նոյն խաչը, եթէ ոչ զոհերից ամենամեծը: Ի՞նչ ենք մենք նրա մէջ տեսնում, եթէ ոչ մի ամենակատարեալ պարգև, որ Փրկիչ Յիսուսը նուիրեց մարդկանց փրկութեան համար: Այս տեսարանը մեզ ի՞նչ է սովորեցնում եթէ ոչ այն՝ որ դուք ամբողջապէս պարտական էք Աստուծոյն, և որ եթէ կրօնը ինքն ըստ ինքեան չլինէր զոհ, նշանակութիւն չէր ունենալ: Այսպէս էին հասկանում նրան բոլոր առաքեալները, որ յիշեցնում են մեզ իրանց թղթերի իւրաքանչիւր երեսում, որ «մենք պատկանում ենք ոչ մեզ, այլ նրան. ով որ մեզ համար չարչարուեց» և որ «. . . պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ՝ հաճոյ Աստուծոյ զխօսուն պաշտօնդ ձեր» (Հռոմ. ԺԲ. 1) և այլն:

Բայց որչափ և պարզ է զոհի անհրաժեշտութեան միտքը, այնուամենայնիւ մենք միշտ հնար ենք գտնում խոյս տալ նրանից: Ի հարկէ երկրպագելու և փառաբանելու համար Աստուծոյ տաճարը մտնող ժողովուրդը շատ մեծ է, բայց այս երկրպագուներից ո՞րքանն են մի միայն իրանց աւելորդը առաջարկում Աստուծոյն, դուրս գալով այն տեղից բաղկաւոր և բաւական իրան-

ցով: Եղբայրնե՛ր, Աստուած մի միայն աւելորդով չէ բաւականա-նում: Նա անպայման սուրբ է ցանկանում, և հենց այդ ու-սուցանում է մեզ Քրիստոսը տառապեալ այրիի օրինակով:

Բայց այստեղ ես պէտք է նախազգուշացնեմ ձեզ այն տարա-կուսանքների մասին, որոնք կծնեցնեն իմ խօսքերը:

Ի՞նչպէս, մեզ կասեն, դուք հաստատում էք որ մարդս պար-տաւոր է Աստուծոյն նուիրել ոչ միայն իր աւելորդը, այլ ան-հրաժեշտն անգամ: Դուք կցանկայի՞ք միթէ, որ տառապեալ այրիից առաջ անցնող հարուստները տաճարի գանձարանի մէջ ձգէին իրանց բոլոր կարողութիւնը: Այո՛ ըստ ձեր կարծեաց միակ միջոցը կլինէր Աստուծոյն հաճոյանալ: Բայց ի՞նչ կպատա-հէր հասարակութեան հետ, եթէ իւրաքանչիւր մարդ, Աստու-ծոյն հաճոյանալու համար, հրաժարուէր այն ամենից ինչ որ ունի: Որդեօք դրա հետևանքը մշտական աղքատութիւնը չէ՞ր լինիլ. գործ անբարոյական, և մինչև իսկ անհնարին:

Ժամանակակից անհաւատութիւնը ճիշդ այսպէս է յեղաշըր-ջում փրկչի խօսքերը. նա մեծացնում է նրանց նշանակութիւնը որ ապա թուլացնի և նոյն իսկ ներկայացնի նրանց մի ինչ որ անիրագործելի բան: Այս տեսակ միջոցը չափազանց յարմար էր Յիսուսի վարդապետութիւնը հերքելու համար: Այս վարդապե-տութիւնը խեղաթիւրեցին, վերագրելով նրան անհնարին պա-հանջներ, որ ազատուել կարողանային նրանից, որպէս վեհանձն ոգևորուող անհատի զառանցանքներից:

Բայց ուղի՞ղ է արդեօք, որ առաջ բերած օրինակով Յիսուսը ցանկանում էր պարտաւորացնել մեզ գրականապէս աղքատու-թեան մէջ ապրել: Ուղի՞ղ է արդեօք, որ նա արգելում է մեզ հոգալ անհրաժեշտ կարիքների մասին, նրան հաճոյանալու հա-մար: Ո՞րչափ փոքր են հասկանում Յիսուսի վարդապետութեան էութիւնը նրանք՝ որոնք այդպէս են խօսում, այդպէս են մտա-ծում: Քրիստոսը հասարակական յեղափոխութեան մասին եր-բէք չէր երազում: Աղքատութիւնը, նոյն իսկ չքաւորութիւնը, հեռի ամենատեսակ օգնութիւնից, ամենևին սիստեմայի չէ վե-րածել: Մենք շատ լաւ գիտենք որ Քրիստոսը իր աշակերտնե-

րին հրամայեց՝ թողնել իրանց բոլոր ունեցած չունեցածը և հետևել Նրան: Այլ կերպ չէր կարող լինել: Նրանից իսկական կոչումը այդ էր պահանջում: Այն տեսակ մեծ գործի համար պահանջվում էին մարդիկ, որոնք ազատ լինէին մարմնական և աշխարհական ամենատեսակ հոգսերից, մտածմունքներից: Բայց այդ, արդեօք Քրիստոսը մշտապէս պահանջո՞ւմ էր իւրաքանչիւրից, որոնք հետևում էին Նրան: Արդեօք այդ, անփոփոխելի և պարտաւորական պայման դարձրե՞ց իւրաքանչիւրի փրկութեան համար: Եղբայրներ, Նա քարոզում էր բոլորի համար ներքին, հոգևոր զրկանքներ, հոգու աղքատութիւն, որ ինչպէս հարուստը, այնպէս և չունևորը կարող են լաւ ճանաչել, հասկանալ: Նոյն իսկ տառապեալ այրիի օրինակով, Յիսուսը ցանկանում է մատնանիշ անել, որ Ամենաբարձրեալը նայում է ոչ զոհաբերութեան, այլ սրտերին: Ինչո՞ւ տառապեալ այրիի երկու լումաները — Յիսուսի աչքում այդպէս մեծ գին ունէին: Որովհետև այդ զոհաբերութիւնը, որչափ և աննշան, այնու հանդերձ ներքին, ամբողջ, անպայման զոհի նշան են: Այս խեղճ կինը ամբողջովին նուիրեց իրան Աստուծոյն:

Ահա ինչ բանի է ծառայում Նրա ուխտադրութիւնը: Նա առաւել թանկագին է բոլոր գանձերից, որ բաժանում էին փարիսեցիք, առաւել թանկագին է տաճարի բոլոր հոյակապութիւնից: Ուրիշները տալով իրանց աւելորդը, հրաժարվում էին կատարեալ զոհից, որ առաջարկում էր այնչափ սիրով տառապեալ այրին: Այստեղ գործը այն մասին չէ որ դուք ձեր կարողութիւնը, կամ այն՝ ինչ որ ձեզ անհրաժեշտ է, կնուիրէք այս կամ այն աստուածահաճոյ գործի, այստեղ հարկ է հասկանալ, բնագրի իմաստին համաձայն. նուիրո՞ւմ էք արդեօք ձեզ ամբողջովին Աստուծոյն, տառապեալ այրիի նման, թէ՝ նուիրում էք Նրան նախ և առաջ մի միայն ձեր աւելորդութիւնը: Այսպէս է վարդապետութեան իմաստը, այսպէս է հարցը, որի վերայ անհրաժեշտ է կենդրոնացնել մեր ուշադրութիւնը:

Տալ Աստուծոյն իւր աւելորդութի՞ւնը Նրան, Որին մենք պարտական ենք ըստ ամենայնի: Գիտէք արդեօք ո՞վ կարող է այս-

պէս դատել, այսպէս հաշիւ տեսնել։ Սա անհաւատ մարդն է։ Աստուած, ապագայ կեանք, երկինք, դժոխք, որոնք բոլորը նրա համար գոյութիւն չունեցող բաներ են։ Նա թէև չէ հաւատում, սակայն անհանգիստ է, որովհետև մշտապէս տեսնում է ինչպէս նրա առաջ կանգնում է աշխարհը խօսքը. «Թերևս սխալվում է նա» — խօսք՝ որ բաւական է նրա խաղաղութիւնը վըրդովել։ Ո՞րպէս վատատեսեց նա այս տանջող երկբայութիւնը։ Յաճախ խաբուել է նա. խաբուել է տեսանելի և շօշափելի առարկաներում. միթէ չէ՞ կարող խաբուել և անտեսանելի առարկաներում։ Միթէ մահը գաղտնիք չէ՞. միթէ՞ նրանով վերջանում են ամեն սահմանադրութիւն, կարգ—կանոն։ Ես հականում եմ ինչպէս մարդս, այս մտքերի ճնշման տակ, ինքն իրան ատում է. Ուղիղ է, ես չեմ հաւատում յաւիտենական ապագային, ոչ արդար Վարձատրողին, բայց գուցէ սխալվում եմ։ Մթերենք ապահով լողալու ժամանակի համար։ Պահպանենք Ամենաբարձրեալի օգնութիւնը։ Ներկայ կեանքին, նրա օգտին ու բաղդին նուիրենք այն ամենը ինչ որ պահանջում են այս շահերը, իսկ Աստուծոյն կնուիրենք աւելորդը և դրանով պաշտպանութիւն կպատրաստենք նրա մէջ։ Ինձ հասկանալի է, անհաւատ մարդու զգոյշ եսականութեան այս տեսակ հաշիւը. բայց քրիստոնեայինը, այդ ես չեմ հասկանում։

Փորձենք ճշտապէս պատկերացնել. քրիստոնեայի զգացմունքը, որը մերժելով Աստուծոյն այն կատարեալ զոհը, որ նա պահանջում է, համաձայնում է տալ նրան իւր աւելորդը միայն։ Լսենք, ինչպէս է նա խօսում. ինքն իրան հակառակ վկայարանելով։

Ես հաւատում եմ Աստուծոյն, նա կայ, մեղ, այսինքն ես խոստովանում եմ որ այն ամէնը ինչ որ ունիմ, ստացել եմ Աստուածանից. կեանք, առողջութիւն. ընդունակութիւններ, խելք, սիրտ, բոլորը. բոլորը նրանից եմ ստացել։ Մտերմական սերտ կապեր, ուրախութիւններ իմ կեանքի մէջ. Թանկագին արարածներ, զաւակներ, որոնց մէջ ես զգում էի իմ կեանքի վերածնութիւնը — այս բոլորը ոչ միայն նա է պարգևել, այլ և

նա է պահել — պահպանել։ Մի անգամ քիչ մնաց հարստութիւնը խոյս տար ինձանից. ես նախատեսած կարիքի — պակասութեանց մռայլ պատկերը. առողջութիւնս անյայտացաւ, ես հիւանդացայ. և մահը, գուցէ արդէն շատ անգամ այցելեց ինձ։ Ես տեսայ թէ ինչպէս կաթոգին սիրելիներս զրկվում են կեանքից, և ես նրանց վերայ նայում էի ինչպէս ինձ համար արդէն կորածների վերայ։ Բայց Աստուած, իւր բարեգթութեամբ նոր կեանք պարգևեց նրանց. և նրանց սիրող դէմքերը շրջապատում են ինձ ցարդ։ Կորցրած ոյժերս կրկին վերականգնեցան. այլ ես չեմ զգում առօրեայ հացի կարօտութիւն. և այս ամենի մասին պարտական եմ Աստուծոյ, նրա ողորմութեան միայն։ Բայց այս նմանութիւնից անհամեմատ աւելի բարձր, աւելի լաւը կայ։ Երբ ես հեռացայ Աստուածանից, ապրում էի աշխարհի և յատկապէս ինձ համար. երբ ես Աստուածային օրէնքը դրժեցի և նրա արդար բարկութիւնը թափեցի ինձ վերայ, երբ ես իմ հօր տանից խոյս տուի և խորասուզուեցի անառակութեան մէջ, այն ժամանակ Աստուած, որ չէ ցանկանում մեղաւորի մահը, ուղարկեց ինձ համար ոչ միայն իւր մարգարէներին և առաքեալներին, բայց և իւր սիրելի — Միածին Որդուն։ Եւ ահա Յիսուս Քրիստոսը իջաւ երկրի վերայ, իմ կարիքները ճանաչելու, իմ մեղքերը իւր վերայ առնելու, յաւիտենական մահից փրկելու։ Նա տուեց ամենամեծ զոհը — իւր անձը նուիրեց։ Ո՜րպիսի անարգանքների, տանջանքների ենթարկեցին նրան մարդիկ, որոնց բարերարեց իւր բոլոր կեանքի ժամանակ։ Ճշմարիտն եմ ասում, եթէ ես մարդկանց և հրեշտակաց լեզու ունենայի, դարձեալ անկարող էի բաւականաչափ խօսք գտնել նրա գթասրտութեան բոլոր խորութիւնը արտայայտելու։ Այս բոլորը Աստուած արաւ ինձ համար. այն ինչ ես դարձեալ խոյս տուի նրանից. այժմ որպէս զի երախտագիտութիւնս ապացուցանել կարողանամ՝ ահա ինչ կանեմ։ Այս ամենը ինչ որ նա պարգևատրել է. կարողութիւն, կեանքի բարեկամական կապեր, երկու մաս կբաժանեմ. ամենամեծը, ամենալաւը ինձ համար կպահեմ, իսկ բոլոր մնացածը, ինչ որ ինձ

համար նշանաւոր չէ և համարեայ անպէտք է․ Աստուծոյն կառաջարկեմ:

Այս տեսակ մտքերը, եղբայրներ, հաւանօրէն վրդովում է ձեզ․ ես ուրախութեամբ հաւատում եմ դրան, որովհետև հոգին ունի իւր առանձին մաքրութիւնը, որ թոյլ չէ տալիս նրան առանց կարմրելու ուղիղ երեսից նայել ապերախտութեան և չարութեան մասին: Բայց մեր հոգին գայթակղեցնողի ամենաբարձր հմտութիւնը պարունակւում է նրա ծածկուած խաղի մէջ: Ես, —հարկաւ, չեմ ճանաչում ոչ ոքի, որ ցանկանար օրինակ վերցնել այս պատկերներից: Բայց ո՞ւմ նման է նա, որ չհամարձակուելով խոստովանել իւր համերաշխութիւնը նրա հետ, մտածում է այդ պատկերը իւր կեանքի մէջ իրագործել: Ո՜հ, մեր սրտի ոչնչութի՜ւն, այն՝ ինչից մենք կարդում ենք խօսքերով, չենք կարծում երբ իսկապէս իրագործում ենք: Այն՝ ինչ որ վրդովում է մեզ, պարզ արտայայտում է մեծամասնութեան գործողութեան ձևը միայն․ մինչև իսկ նրանց մէջ, որոնք անընդհատ խօսում են Աստուծոյ մասին և փայլում են արտաքին բարեպաշտութեամբ: Հետևեալ ենթադրութիւնը ձեզ կապացուցանի, սխալվո՞ւմ եմ արդեօք ես:

Իմ վերցրած բնագրի պատմելուն համաձայն, Յիսուսը նստած դիտում է, թէ ինչպէս ամենայն ոք տաճարը մտնողներից գանձանակի մէջ գձում է իւր նուէրը․ և նրանց մէջ, որոնք տալիս են Աստուծոյն միմիայն իրանց աւելորդը, Նա նկատում է մի կին որ Նրան նուիրում է բոլորը, ինչ որ ունի: Ես կենթադրեմ այժմ որ մի և նոյն տաճարի դռների մօտ, Յիսուսը նկատում է, և մեզ, իւր առաջևից անցնելիս: Փորձենք ներկայացնել այն պատկերը որ բացվում է Նրա տեսութեան առաջ:

Ահա ամենից առաջ անցնում է նորատի երիտասարդը․ բաղդաւոր, վստահ—համարձակ, ինքն իրան հաւատացած․ կեանքը նրա առաջ բացւումէ ամենաազնիւ գործունէութեան համար: Նա, եթէ ցանկանում էք իմանալ, վեհանձն բնաւորութեան տէր է երազումէ լայն ասպարէզների մասին այստեղ՝ երկրի վերայ: Ես կարծես թէ, կարդում եմ նրա սրտինը և բաց եմ անում նրա բոլոր

նախագծերը: Նա զգում՛ է որ հրաւիրուած է բարձր, վսեմ կոչմանը. սիրում՛ է գեղարուեստ, գիտութիւն. յոյս ունի որ նրա անունը երբ և իցէ փառքով կշրջապատուի: Բայց գուցէ նա այդչափ հեռու էլ չէ անցնում իւր ցանկութիւնների մէջ. գուցէ սահմանափակվում՛ է մի միայն իւր դրութեան բարելաւութեամբ, կամ՛ որ և է օգտաւէտ տեղ ձեռք բերելով, որ նրա ջերմագին ցանկութիւնների իրականացումն է կազմում: Բայց ասպարէզը դժուարին է. բազմաթիւ ախոյեաններ շրջապատում՛ են նրան. այն ինչ ժամանակը չէ սպասում. պէտք է գնալ, անընդհատ գնալ: Ահա ինչն է նրա կեանքի նպատակը. ահա ինչն է նրա համար գլխաւորը: Այս բոլորի մէջ ես շատ լաւ տեսնում՛ եմ մարդուն պատկանեալ մասը, բայց Աստուծոյն պատկանեալ մասը ի զուր կորոնեմ՛: Ես նրան հարց ու փորձ եմ՛ անում այս մասին և նա ինձ պատասխանում՛ է որ այդ մասը պահպանում՛ է պահեստի մէջ, յուսալով որ նրան երբ և իցէ կառաջարկի Աստուծոյն: Այս ջանքերը, յառաջադիմութիւնը, հարստութիւնը, փառքը, որոնց մասին նա երազում՛ է. այս բոլոր բաներով յոյս ունի երբ և իցէ Աստուծոյն ծառայել . . . Բայց եթէ այդպէս է, հեռացիր նորահաս եղբայր, քո նուիրատուութեամբ, որովհետև դու Աստուծոյն նշանակում՛ ես քո աւելորդը միայն. պահելով կեանքդ և սիրտդ մի միայն քեզ համար:

Ահա մօտենում՛ է նորաբողբոջ օրիորդը. նա իւր հերթում՛ մօտենում՛ է մի այնպիսի սրտով՝ որ լի է ամենայն հաւատարմութեամբ, որովհետև ապագան նրա համար լի է խորհրդաւոր խոստմունքներով: Ո՞վ կարող է մեզ պատմել այն բազմաթիւ ցնորքների մասին, որոնց մէջ թափառում՛ է նրա միտքը: Նա իրան բաղդաւոր է զգում: նրանով զմայլուած են. նրան նախանձում՛ են. նա բարեկարգում՛ է իւր գոյութիւնը, հետևելով իւր ընտրութեան ճաշակին, և սրտի ցանկութիւններին: Սա նոյնպէս, գուցէ մի վեհանձուհի է, որին բաւականութիւն չեն տալիս պճնապարդութեան և աշխարհային բաւականութեանց մասին հոգսերը: Բայց որքան և բարձր լինէր նրա ճաշակը, այնուամենայնիւ մի միայն իրան է վերաբերում՛, մի միայն նրա

կեանքն ու բաղդաւորութիւնն ի նկատի ունի։ Սակայն նա հաւատացեալ էակ է. նրա խիղճը խիստ զգայուն է դէպի այն ամենը, ինչ որ բարի է, ինչ որ վսեմ է. և ահա նա զգում է որ իւր կեանքի մի մասը պարտաւոր է Աստուծոյն նուիրել։ Բայց այս մասը նա թողնում է պահեստի մէջ, այո՛ պահեստի մէջ։ Երբ նրա սիրտը կճաշակի ամեն ուրախութիւն, որոնց մասին նա երազում է, և կխմի նրանց բաժակը ամբողջապէս, երբ նա կըծանօթանայ այն ամենին, ինչ որ նա ցանկանում է գիտենալ, այն ժամանակ միայն կդառնայ Առ Աստուած։ Եթէ այդպէս է, անցիր նորահաս քոյրիկ, քո նուիրատուութեամբ. անցիր աշխարհի քաջալերող ժպիտների միջով։ Մի միայն մի հայեացք տխրութեամբ հետեւում է քեզ. դա նրա հայեացքն է, Որը նըստած է տաճարի դռան մօտ։ Նա սպասում էր քո սրտին, իսկ դու տուիր նրան մի միայն քո աւելորդը. այն՝ ինչ որ քեզ արդէն այլ ևս հարկաւոր չէ։

Ահա անցնում է գործաւոր մարդը։ Աստուած օրհնեց նրա ձեռնարկութիւնները, որոնք այժմ ծաղկած դրութեան մէջ են։ Նա նշանաւոր կարողութեան տէր է. գնում է անտառն՝ հաստատ քայլերով և կատարելապէս հաւատալով իւր ոյժերին։ Ո՛հ, եթէ նա նուիրուէր Աստուծոյն, ո՜րքան բարութիւն կարող էր անել։ Ո՜րչափ գեղեցիկ, օգտակար հիմնարկութիւններ կարող էր պահպանել, ո՜րքան թշուառների կարող էր ստոր դրութիւնից բարձրացնել. ո՜րքան նորահաս խելքեր կարող էր բարոյական անկումից, ապականութիւնից, և պատրաստել երկնային թագաւորութեան համար։ Արդեօք նա այս բարեգործութիւնները կանի՞. հաւատո՞ւմ է Աստուծոյն. գիտէ՞ որ Աստուած պահանջում է իւր մասը նրա կեանքից, իսկ նա դեռ պահում — պահպանում է այդ մասը։ Յետոյ ասում է նա, երբ աւելի կմեծացնեմ իմ կարողութիւնս, առաւել ազդեցութիւն կունենամ, ինձ շրջապատող ախոյեաններին յետեւս կտեսնեմ, այն ժամանակ կարող եմ Աստուծոյն նուիրել առատ տասանորդ։ Դու նոյնպէս, իմ եղբայր, յետ քաշուիր քո նուիրաբերութեամբ։ Աստուած պահանջում է քեզանից

քո կեանքը· այն ինչ դու տալիս ես նրան քո աւելորդը միայն։

Բայց ահա ծանրաքայլ գալիս է ծերուկը, որը գուցէ ապրելու է ընդամենը երկու-երեք տարի թերեւս մի քանի օր միայն։ Սա փորձառութեան մնացորդ է, փշրուած սրտի զօրութեան եւ եռանդի մնացորդ· ո՞ւմ կարող էր նա նուիրել, եթէ ոչ Աստուծոյն։ Ո՞ւմ կարող էր նա առաւել յուսալի կերպով տալ նըրանց։ Ամենայն ինչ նրանից խուսափում է, ամենայն ինչ նրա շուրջը անհետք կորչում է. ամենայն ինչ նրան ասում է իւր ցանկութեանց ունայնութեան եւ մօտալուտ վախճանի մասին։ Բայց ի՞նչ. նա տալի՞ս է իսկապէս Աստուծոյն իւր դողդոջիւն եւ սառոյց կորած ձեռքերով։ Նա կարող էր կէս կեանքը նուիրել, Աստուած դեռ կընդունէր նրա զոհը, յետ չէր մղել նրանից, այս մետասաներորդ ժամի մշակին։ Բայց չէ, նա եւս չէ նուիրում իրան։ Իւր կտակում, թերեւս նշանակել է մի փոքր մաս աստուածահաճոյ գործերի· բայց քանի որ նրա մէջ դեռ եւս կեանք կայ, այդ մասն էլ կպահի իւր համար։ Անցի՛ր եւ դու իմ եղբայր, անցի՛ր քո տխուր նուիրատուութեամբ, քո աւելորդութեամբ։

Բայց արդեօք ե՞րբ կանցնի տառապեալ այրին։ Երբ կանցնի նա որ ամբողջապէս իրան կնուիրի Աստուծոյն։ Քրիստոսը սպասում է նրան։ Աւա՜ղ, որքան երկար սպասում է նրան· գուցէ նա հէնց այստեղ, մեր ժողովի մէջ է գտնւում։ Գուցէ նա այստեղ է եկել նախապէս վճռած լինելով· ո՛չ սովորական արտաքին երկրպագութիւնը նուիրելու Աստուծոյն, որ օտար է նրա սրտին։ Բայց եթէ նա այստեղ է, թող առաջ անցնի, թող նուիրի Աստուծոյն ո՛չ իւր կարողութիւնը, այլ իւր բարոյական եւ հոգեւոր աղքատութիւնը։ Եթէ նա ծանր յանցաւոր է, թող առաջ գայ եւ լռիկ մնջիկ նուիրի իրան Աստուծոյն, որ հրաւիրում է նրան։ Եւ Աստուած կտեսնի նրան եւ իւր երեսը դարձնելով այն յարգողներից, որոնք կարողացել են մի միայն իրանց աւելորդը նուիրել, գաղտնածածուկ կօրհնի, այն օրուան սպասելով, երբ կընդունի նրան իւր խաղաղութեան մէջ։

Բայց դո՛ւք որ դեռ ևս տատանվում էք, դո՛ւք որ ցանկանում էք նուիրել Աստուծոյն մի միայն ձեր աւելորդութիւնները, դո՛ւք որ ժլատի նման ձեր սրտին էք սեղմում ձեր գանձի ամենալաւ մասը—միթէ՞ դուք մտածում էք՝ մերժելով Աստուծոյն, կարող էք ընդ միշտ պահպանել նրան ձեզ համա՞ր: Ձեր գանձը ձեռանից կյափշտակեն գուցէ հէնց վաղը, և դուք ցաւ ի սիրտ կախոսաք և դառնապէս կզղջաք որ չնուիրեցիք Աստուծոյն. որովհետև Աստուծոյն նուիրելով, դուք նրան երբէք չէիք կորցնիլ: Ինչ որ տալիս ենք, այն գտնում ենք. և այսպէս կկատարուին Ս. գրքի խօսքերը. «Որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա» (Մատթ. Ժ. 39): Այո՛, երիտասարդութիւնը որ աշխարհի գրկից խլում Աստուծոյն է նուիրվում, ոչինչ բան նրան չի ստիպիլ թառամելու: Ոյժերը որ կապառենք մեր միակ Ուսուցչի ծառայութեան մէջ՝ կվերադարձուի. աշխարհի՝ կարծիքով կորցրած կարողութիւնը նորից կմեծանայ. Աստուծոյ մէջ կենդրոնացրած հաւատարմական կապերը ընդ միշտ կշարունակուին: Եւ հէնց այսպէս էլ աւանդեց մեզ մեր Ուսուցիչը. «Եւ ամենայն որ ոք եթող զտուն՝ կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր՝ կամ զկին կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ և զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ» (Մատթ. ԺԹ. 29):

Բայց Տիրոջը մերժելով ինչ որ առաւել լաւ է, դուք չէք կարող մերժել այն՝ մահուան: Եւ մահը կգայ: Լսեցէք: Նա արդէն մօտենում է. ծեծում է ձեր դուռը. այն ժամանակ ի՞նչ բանի կծառայի ժլատութեամբ պահպանած ձեր գանձերը, բոլոր աշխարհային ուրախութիւնները, կենսական—մտերմական կապերն ու հաշիւները, որոնք ներշնչուած են եսական հոգսերով ձեր մասին միայն: Ո՜հ, ինչպէս դուք կցանկայիք այն ժամանակ ձեր սրտի, ժամանակի և կեանքի աւելորդութիւնները տալ աշխարհին, գլխաւորը Աստուծոյ համար պահելով: Բայց մահը կգայ և չի բաւականանալ ձեր աւելորդութեամբ: Նրան ցանկալի է ամենայն ինչ ունենալ և դուք ստիպուած կլինէք ամենայն ինչ տալ նրան: Նա կստիպի բանալ այն ձեռները, որ ջերմ սիրով և

բոլոր ուժով բռնած ունէին իրանց գանձերը. կուզէի թողնել այն կարողութիւնը որ դուք աշխատում էիք պահպանել ձեզ համար: Ո՜հ, ոչնչութիւն հարստութեան և խաբուսիկ իշխանութեան: Արժէ՞ր միթէ նրանց համար ապրել: Ո՜րչափ աշխատանք, ենթադրութիւններ, հաշիւներ և ջանքեր ոչնչով պէտք է վերջանան: Բայց երանի թէ ոչնչով վերջանային: Դեռ հարկաւոր կլինի հաշիւ տալ: Ի՞նչ դատաւճիռ է սպասում արդեօք Արդար Դատաւորից մարդուն՝ այն կեանքի համար, որի մէջ նրան նշանակած մասը, ծառայել կնշանակէր նրա երկրպագութիւնը: Ի՞նչ ընդունելութիւն կցանկայիք դուք նրանց համար, որոնք կարողացել են այդպէս յաջողութեամբ անուշադիր թողնել, անտես առնել նրան այստեղ՝ կեանքի ժամանակ: Միթէ այս տեսակ ծառաներին նա կարո՞ղ է ասել. «Մուտ յուրախութիւն տեառն քո» Մատթ. ԻԵ. 23): Ի՞նչ ծառաներ են նրանք, որոնք իրանց անհատական շահերին և փառքին են ծառայել և որ ամեն տեղ մի միայն իրանց ես են տեսել: Յիսուսը նախագուշակել է այդ տեսակ մարդկանց ապագան. Նրանց կվերաբերի հետեւեալ սպառնալի, բայց արդար վճիռը. «Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական» . (Մատթ. ԻԵ. 41): «Ամեն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ . (Մատթ. ԻԵ. 12):

Վերջացնելով զրուցաբանութիւնս, ես գալիս եմ եզակի տարակուսութեան. երկիւղ եմ կրում որ գոհացուցիչ չափով հաւատարիմ չմնացի իմ վերցրած բնագրից քաղած պատմութեան: Նրա մէջ ի՞նչ եմ տեսնում: Մի խեղճ կին, որ տուեց Աստուծոյն այն՝ ինչ որ ունէր: Եւ ես ցոյց տուի, որ մենք այս օրինակի մէջ պէտք է նմանուենք — հետեւող լինենք այն ներքին զոհին, որի անխուսափելի հետեւանքը նուիրատուութիւնն է: Եւ այս իսկապէս է. որովհետեւ եթէ տառապեալ կնոջ տուրքը ներշնչուած լինէր հպարտութեան կամ փարիսեցութեան զգացմունքով, նրա գործը ոչինչ գին չէր ունենալ Աստուծոյ առաջ: Հետեւապէս, հարկաւոր է ի նկատի ունենալ նրա ներքին նպատակը. և հենց սրանով այդ տառապեալ կինը կարող է մեզ օրինակ լինել: Նրա օրինակով մենք սովորում ենք ոչ թէ

այն, որ մեր կարողութիւնը անպատճառ պարտաւոր ենք Աստուածոյն նուիրել, այլ այն՝ որ մենք պէտք է մեզ նուիրենք Նրան։ Այս բոլորը այսպէս է. սակայն դեռ մի ինչ որ բան կայ այս պատմութեան մէջ. տառապեալ կինը տուեց «ամենայն ինչ»։ Ես չեմ կարող մոռանալ այս։ Ի զուր, ինքս ինձ ասում եմ, որ մենք հրաւիրուած չենք այս տեսակ զոհեր անելու և որ նրանից պէտք է հասկանալ այլ կերպ։ Ես չեմ բաւականանում իմ բացատրութեամբ։ Նա տուեց «ամենայն ինչ»։ Ահա վարմունք, որ ես ցանկանում եմ ներկայացնել ձեզ առանց որ և է դատողութեան։ Ես ձեզ չեմ ասում, տուէք ամենայն ինչ, ինչպէս Նա. ես զգում եմ որ սա չէ կարող պարտաւորական լինել բոլորի համար։ Բայց ես, ի վերայ այսր ամենայնի, յիշեցնում եմ ձեզ որ Նա տուեց ամենայն ինչ։ Խելագարութեան վերի՞ն աստիճան, կասեն ինձ։ Այո՛, բայց այս խելագարութեամբ փրկվում է աշխարհ։ Այս խելագարութիւնը, հարկաւ բոլորի համար պարտաւորութիւն չէ. բայց Նա չէ՞ կանգնում արդեօք ձեր առաջ, որպէս մի արիւնալի յանդիմանութիւն։ Ցոյց տուէք ինձ ներկայումս քրիստոնեաներ, որոնք ի սէր Յիսուսի աղքատանային։ Իսկ ես ցոյց կտամ ձեզ մարդիկ, որոնք ի սէր հայրենեաց ամենայն ինչ զոհել են. ցոյց կտամ մայր, որ իւր զաւակներին, մէկը միւսի յետևից ուղարկել է պատերազմի դաշտը, մեռնել հայրենի երկրի անկախութեան համար, Աստուծոյն այս տեսակ զոհեր անո՞ւմ են և յաճախակի՞ է կրկնվում։ Ո՞րքան նրանք բազմաթիւ էին առաքեալների ժամանակ և քրիստոնէութեան առաջին դարերում և ո՛րքան համեմատաբար հազուագիւտ են մեր ժամանակներում։ Ի՛նչպէս մենք չհոգանք, եղբայրներ, այն մասին, որ Աւետարանի այրիի օրինակը որքան կարելի է յաճախ ու յաճախ տարուբերուի մեր իմացականութեան առաջ, և որ Փրկչի խօսքերը. «Նա ի չքաւորութենէ իւրմէ զամենայն ինչ որ ունէր՝ արկ գոյիւ չափ զկեանս իւր» (Մարկ. ԺԲ. 44) հնչուէին մեր սրտերում որպէս մշտական յանդիմանութիւն մեր ինքնաշահասիրութեան։

(Բէրլին) ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ԽԱՆՋԱԴԵԱՆՑ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ՄԱ․

Դարալագեազի ազգաբնակութեանց թիւը.— Հայ և Թուրք գիւղերի արտաքին տեսքը.— Գիւղատնտեսութեան գլխաւոր ճիւղերը.— Լուսաւորութեան փորձերը կառավարութեան և հասարակութեան կողմից.— Խաչագողութիւնը և նորա անբարոյականացնող հետևանքը.— Թրքական և հայկական անունները հայոց մէջ.— Վերջաբան։

—

Բացայայտ է, որ ճանապարհորդական նկատողութեանցս մեծագոյն և նկարագրութեամբ առաւել հարուստ մասն նուիրուած է Վայոց Ձորին (Դարալագեազին)։ Սորա պատճառը նախ՝ այդ երկրի հնութեանց հարստութիւնն է և երկրորդ՝ այն միջոցը, որ ամբողջ չորս տարի ես ունեցել եմ և գործադրել եմ այդ երկրի ուսումնասիրութեան վերայ։

Արդարև դժուար է գտնել մի այլ սահմանափակ տեղում այնքան բազմատեսակ և բազմաթիւ հնութիւններ, որքան տալիս է մեզ Դարալագեազը։ Սահմանափակ չէ՞, որ բազմաթիւ հնութիւնները զետեղուած են ընդամենը երկու գետերի՝ Արչայի և Ալագեազի աւազանում, որոնք ունին հազիւ 70—80 վերստ երկարութիւն մինչև Նոյա՝ Շարուրի դաշտ հասնիլը։

Երբեմն զուտ հայկական և զուտ հայաբնակ այդ երկիրը նախքան ռուսաց տիրապետութիւնը՝ դարձել էր թաթար ցեղի սեփականութիւն։ Հայկական տարրը կազմում էին ընդամենը երեք գիւղ, Խաչիկ, Արփայ և Աղաւնաձոր։ Բայց, ինչպէս տեսանք նա-

խընթայ գլխից, 1826 թուականի Ռուս-Պարսկական պատերազմից յետոյ, Պարսկաստանից գաղթած հայերը նշանաւոր կերպով բազմացրին ոչ միայն Դարալագեազի, այլ և Շարուրի, Նախիջևանի և Երևանի գաւառները:

Դարալագեազի այժմեան ազգաբնակութիւնը կարգով, ըստ բազմութեան, կազմում են թուրքերը, հայերը և սակաւաթիւ քիւրդերը: 1872 թուի աշխարհագրութեամբ երկսեռ թուրքերի թիւն է, 14113 հոգի, հայերի թիւը 9585 հոգի և քիւրդերինը 270 հոգի: Հաւանական է, որ այժմ յիշեալ ազգաբնակութիւնը առաւել շատացած լինի: Իսկ յիշեալ հաշուով թուրք տարրը համարեա մի և կէս անգամ աւելի է հայ տարրից:

Գիւղատնտեսութեան գործում այստեղի հայերը շատ յետ են թողել իւրեանցից բազմաթիւ թուրքերին: Անծանօթ օտարականը մտնելով որ և է գիւղ Դարալագեազում, միանգամից կորոշի թէ այդ հայոց է թէ թուրքի: Երբ թուրքերի գիւղերը մերկ ժայռի տակ, կամ լերան ճակատին կպած, բացի իւր գետնափոր տներից աւելի ոչինչ չէ ներկայացնում, հայոց գիւղերի մեծամասնութիւնն, ընդհակառակը, ներկայացնում է քարաշէն տներ սօսէնի ծառերով զարդարուած. իսկ գիւղի շրջապատը ծածկում են խաղողի կանաչ այգիներ:

Այն գիւղերը, որոնք ձորերի տակին մնում են և ջրառատ տեղում, այնտեղ այգեգործութիւնը զարգացած է: Մտէք կարգով Արփայ, Գյոլլթուլ, Եղփին, Ռինդ, Այնազուր, Այար, Քեշիշքեանդ, Մալիշկայ, Օրթաքեանդ, Բաշքեանդ, Հասանքեանդ, Երդափին, Քարագլուխ, և Թառաթին, ուր կտեսնէք ընդարձակ այգիներ, սօսէնի ձեռատունկ անտառներ և այլն:

Գարնանը այդ կանաչազարդ ձորերը հրաշալի տեսարան են ներկայացնում: Ազատաք, փօռ, փաշալու և Մարտիրոս՝ բարձր դիրք ունենալու պատճառով՝ ունին միայն մրգաբեր այգիներ և անտառներ: Բացառութիւն կազմում են միայն Խաչիկ, Կնիշիկ և Ենգիջայ՝ զուրկ ծառերից և այգիներից:

Ընդհակառակը, թուրքերը և քիւրդերը որքան մեծ ախորժակով սիրում են ուտել հայերի այգիներից գողացած խաղողը, նոյն-

քան ևս աշխատում են խույս տալ այգեշինութիւնից կամ ան-տառաբուծութիւնից. դորա համար խսկ նոցա գիւղերն մերկ և զուրկ են բուսականութիւնից, բացի այն գիւղերը, որոնց ինքը բնութիւնը շնորհել է ծառաստան. օրինակ Ալագեազ, Գիւնէի վանք, Կաւշուտ, Կալասէր, Կոբախլու, Ջանի և այլն:

Եւ այսպէս այգեբանութիւնը Դարալագեազի գաղթական հայերի տնտեսատիրութեան արգասիքներից մինը կարելի է համարել:

Հողագործութիւնը Դարալագեազում բոլոր ազգաբնակութեանց համար հաւասարապէս առաջնակարգ տեղն է բռնում: Հաւասա-րապէս ցանում են ցորեն, գարի, կորէկ և մասամբ կտաւհատ: Իսկ Մալիշկայ, Ալյար, Քեշիշքեանդ, Գոյթուլ և Արփայ գիւղերի հայերը, զետեղուելով Արփաչայի ստորին տաք ափերի վերայ, ցանում են նաև բրինձ և բամբակ:

Սակայն անդերի անհարթութիւնը լեռների լանջերում ցիրցան քարերի բազմութիւնը, ճանապարհների բացակայութիւնը և այլ սոյնպիսի անյաջող հանգամանքներ խիստ դժուարացնում են հո-ղագործի աշխատանքը: Սայլը գրականապէս բացակայում է ամ-բողջ Դարալագեազում: Գիւղացին հարկադրուած է խուրձերը անդից կրել գիւղը եզերով, ձիերով և էշերով: Այն՝ որ կարելի էր մի սայլի վերայ բարձել բարձւում է տասը գրաստի ուսերի վերայ: Ուրեմն, փոխանակ մի զոյգ լծկան եզների, գիւղացին ստիպուած է պահել տասն եզ, կամ տասն էշ կամ ձիանք:

Ճանապարհների բացակայութիւնը խիստ խանգարում է և հա-ցալողի արտահանութեան: Վաթսուն տարուց աւելի է, որ Ռուս-աց տիրապետութիւնը հաստատուած է այս կողմերում, սակայն կառավարութիւնը մինչև ցայսօր ոչ մի ուշադրութիւն չէ արած երկրի տնտեսական այդ կարևոր կէտի վերաբերութեամբ այն է ճանապարհների շինութեան վերայ:

Այդ կողմերի միակ յարմար ճանապարհը պոստի ճանապարհն է, որ Երևանից գնում է Նախիջևան և Օրդուբադ, այն ևս պաշ-տօնէն, բնութիւնից հարթ տեղերով: Այն ինչ Դարալագեազում և նորան կից լեռնային երկրներում չեն շինած ոչ մի տեսակ ճանապարհներ և կամուրջներ:

ճանապարհորդը պէտք է շրջագայի Նախիջևանի, Նոր-Բայազէտի և Գեօրիսի միջև միմիայն ձիով այն ևս մեծամեծ տանջանքներով և վտանգներով: Ուրեմն ճանապարհների բացակայութիւնը մեծ խոչընդոտն է երկրի բարօրութեան զարգացման:

Անասնապահութիւնը առաւել զարգացած է այն գիւղերում, որոնք դասաւորուած են բարձրադիր լեռնագօտիների գագաթներում և լանջերում, ուր այլ կերպ տնտեսագիտութեան համար յարմարին ասպարէզ չկայ:

Մեղուաբուծութիւնը կարելոյն չափ տարածուած է բոլոր բարձրադիր հայ, նաև թուրք գիւղերում: Ո՞ւմ չէ յայտնի Կնիշիկի, Մարտիրոսի, Կուշչիբիլակի, Գնդեվազի, Հերհերի, Երդափինի, Այնազուրի, Ելփինի և այլ գիւղերի քաղցրահամ, գեղեցկատեսիլ լուսաթաթախ մեղրահացերը: Ի՞նչ կասկած, որ միւս գիւղատնտեսական ճիւղերի կարգում և մեղուաբուծութիւնը կատարւում է նահապետական ձևով:

Ահա այսպիսի տնտեսական բարօրութեան է հասել, մօտ 50 տարու ընթացքում, զանազան նեղութիւն կրելով մի գաղթական ժողովուրդ, որ ձգելով Պարսկաստանում իւր արդէն կազմակերպուած տնտեսութիւնը, նորից հազիւ կարողացել է ձեռք բերել վերոյիշեալ չափով և միմիայն իւր բնատուր, ինքնուրոյն աշխատութեամբ, ոչ միայն առանց կողմնակի նպաստի և օգնութեան, այլ և հեռացնելով իւրեանից բազմաթիւ արգելքներ և խոչընդոտներ:

Տնտեսական փոքր ի շատէ գոհացուցիչ ապահովութեան հասնելով, հայ ժողովուրդն արդէն սկսել էր մտածել և իւր սերնդի մտաւոր զարգացման մասին, առաւել յոյս դնելով իւր սեպհական միջոցների և գործունէութեան վերայ:

Ճիշդ է, դեռ ևս 1839, 1843 44 և 45 թուականներին կառավարութիւնը հրաւէր կարդաց Անդրկովկասեան պատուաւոր թուրքերի հետ և Դարալագեազի թուրքերին, որպէս զի ցանկացողները ուղարկեն իւրեանց որդոց, պետական հաշուով, Պետերբուրգի զինուորական կորպուսները, Պետերբուրգի օրէնագիտական դպրոց, Պետերբուրգի համալսարանի արևելեան բաժինը,

Մոսկվայի համալսարան և Լազարեանց ճեմարան և այս պատուաւոր Թուրքերի թւում էին առանձին քաղաքացին, ընդունել և պատուաւոր Հայերին, բայց Թուրքերին նախապէս համարել։

Որովհետև այս պաշտօնական հրաւէրները կատարւում էին նահանգապետների և գաւառապետների միջոցով և վերջինները յայտնում էին հասարակութեանցը զասեդատելների (մօվրով) ձեռքով, ուստի Դարալագեազի զասեդատելները միշտ պատասխանել են Նախիջևանի գաւառապետին թէ «Դարալագեազում պատուաւոր Թուրքերից ցանկացող չկայ, իսկ Հայերը ռամիկ են և նորանց մէջ պատուաւոր ոչ ոք չկայ [1])։

Տասնևհինգ տարի առաջ, գաղթելու ժամանակ, Հայ հոգևորականների և Հայ իշխանների ձեռքով մեծամեծ խոստումներ վայելած Հայերը, խորիմաստ և հանճարեղ զասեդատելներից իմացան, որ չկայ իւրեանց մէջ ոչ մի պատուաւոր անձն, և հետևաբար՝ արժանի բարձր ուսման։ Սակայն պէտք է խոստովանել, որ եթէ զասեդատելի աչքում բոլոր Հայերը ևս լինէին պատուաւոր ու կառավարութեան հրաւէրը Թուրքերի չափ հաւասար և նորանց կարդացուէր, այնուամենայնիւ չէր գտնուիլ մի անձն, որ կարողանար մանել բարձր դպրոցները։ Ըստ որում Դարալագեազի հայ ժողովուրդը այդ ժամանակ տարրական անգամ դպրոց չունէր,

Այն ժամանակի հայոց հոգևոր իշխանութիւնն անձեռնհաս էր դպրոցական գործերում, ուստի գաղթական ժողովրդի նոր սերընդի մտաւոր զարգացման հոգսը թողնուած էր նոյն իսկ ժողովրդին։ Հակառակ այդ աննպաստ հանգամանքներին, Դարալագեազի հայ բնակութիւնը կարողացաւ ունենալ այս և այն գիւղում կարճատև, անկանոն ծխական դպրոցներ։ Վերջինները երևացել

---

[1]) Циркуляръ Грузино-Имеретинскаго Губернатора, 31 Іюля 1842 года, № 6375.

— Циркуляръ Нахичеванскаго Уѣзднаго Начальника Фофонова, 3 Марта 1844 г. № 1121.

— Данесенія Засѣдателя Запарофскаго, 7 Мая 1843 г. № 391 и другія.

են Խաչիկում, Կնիշիկում, Կորադիզում, Փոսում, Ազատակում, Մարտիրոսում, Մալիշկայում, Քեշիշքեանդում, Նրգաւիթում, Սուրբ Խաչ վանքում և այլն 1):

Այդ դպրոցները, կրկնում եմ, եղել են անկանոն, անմիջոց, հսկողութիւնից զուրկ, ենթարկուած սորա և նորա կամայականութեան, ուրեմն և կարճատև: Այս միայն ապացոյց էր հասարակութեան բուռն ցանկութեան որոնել և գտնել միջոց մանկանց կրթութեան համար:

Դարալագեազի հայ ժողովուրդը բարի ձգտման հետ ունի և մի քանի վատ, անբարոյականացնող կողմեր, ազդող հասարակաց կեանքի վերայ: Դորանցից մինն է խաչագողութիւնը, որով զբաղուած են բացառապէս գաղթական և ոչ բնիկ հայերը: Իւրաքանչիւր գիւղ ունի Ռուսաստանում իւր խաչագողները, բայց Փոս, Փաշալու և Քեշիշքեանդ գիւղերը գերազանցում են:

Խաչագողութեան ախտը շատ յաճախ քայքայում է ընտանեկան հիմքը: Քանիցս անգամ պատահած է, որ տղամարդ ամուսնու երկարամեայ բացակայութեամբ՝ կին ամուսինը նորանոր սիրոյ կապեր է հաստատում այլոց հետ, շատ յաճախ՝ ամուսնացած տղամարդի հետ: Դարալագեազում հազուագիւտ երևոյթ չէ, որ տղամարդը, բացի իւր օրինաւոր կինը, միանգամայն պահում է և մի ապօրինի կին, որի ամուսինը գնացած է խաչագողութեան: Իսկ այրի տղամարդկանց հետ յիշեալ կանանց կենակցութիւնը ևս առաւել յաճախակի է լինում:

Դորանից առաջանում է ապօրինի համակեցութիւն և բազմանում է ապօրինի զաւակաց թիւը: Տարաբաղդաբար այս երևոյթը այնքան է ընդհանրացած Դարալագեազում, որ հասարակութիւնը սառնասրտութեամբ է նայում նորա վերայ: Առաւել ցաւալին այն է, որ ապօրինի համակեցութեան ենթարկուած են ու մի քանի այրի հոգևորականք, ի նախատինս և յամօթ իւրեանց կոչման:

Սոյն անբարոյական երևոյթը մի գուցէ կախում ունի թուրք

---

1) Քաջբերունի «Դպրոցական գործը Շարուր-Դարալագեազ գաւառում» «Արձագանք»՝ 1887. №№ 7, 8, 9 և անտիպ շարունակութիւն:

տարրի ազդեցութիւնից: Ազդեցութիւնն այնքան խոր արմատ է գաղթական ժողովրդի սովորութեանց մէջ, որ ոչ մի Թուրք չի կրում հայի անուն, իսկ բազմաթիւ հայեր կրում են Թուրքի անուններ:

Դարալագեազի և Շարուրի 6460 հայ արականներից 593 անձըն կրում են զուտ թրքական անուններ. օրինակ՝ Աղաջան, Աղախան, Ալլահվերդի, Բաբայ, Բաբագիւլ, Գիւլնազար, Դովլաթ, Ենգիբար, Էշխիբէգ, Թէմուր, Իլղառ, Խասխար, Խուդավերդի, Հախվերդի, Ղուլիջան, Միր ազիզ և այլն:

Մնացեալ անձինք կրում են հայկական անուններ, որ հետաքրքրութեան համար աւելորդ չհամարեցի յիշատակել այստեղ: Բոլոր 6460 արական հոգիք կրում են ընդամենը 249 անուն: Ի բաց առնելով թրքական անունները, ըստ բազմութեան անձանց, առաջնակարգ տեղը բռնում է Յովհաննէս (387 անձն, ապա) Յարութիւն (334). Խաչատուր (291) Կարապետ (257). Գրիգոր (244) Ստեփան (234). Մկրտիչ 226) Սարգիս (198). Գէորգ (169). Թադէոս (143). Վարդան (137). Առաքել (120). Աւագ (104). Սահակ (94). Պօղոս (92) Ալեքսանդր (91) և այլն:

Ուշադրութեան արժանի է վերոյիշեալ երևոյթը, որ հայերը կարծես շատ սիրում են յիշեալ անունները, մանաւանդ Յովհաննէս անունը: Երբ 1874 թուին թեթև վիճակագրութիւն կազմեցի Ռուսաստանի հայ քահանաների մասին 1) այն ժամանակ ևս յայտնուեց, որ քահանաների մէջ նոյնպէս առաջին տեղը բռնում է Յովհաննէս և հետևաբար կարգով Գրիգոր, Յարութիւն, Յակոբ, Ստեփաննոս և այլն:

Վերջացնելով ճանապարհորդական նկատողութիւններս, վերջաբանիս մէջ կրկին ակնարկ եմ ձգում այդ աշխատութեան և նորան կազմելու մի քանի դժուարութեանց վերայ: Երբև մի ծառայող, հասարակ աստիճանաւոր, շրջագայելով նկարագրած տեղերում և երկրներում, ես յաճախակի հանդիպել եմ մարդկանց,

---

1) Քաջբերունի. «Հայ քահանայք Ռուսաստանում» «Մեղու Հայաստանի». 1874 թ. № 23.

լեռների, գետերի, բոյսերի, հանքերի հնութիւնների, և այլն և այլն և ցանկացել եմ ուշադրութեան առնել այդ բոլորը և կարողութեանս չափ գրի անցուցանել:

Իմ ներկայ աշխատութեանս ես առել եմ այնպիսի մի ձև, որ իբրև ճանապարհորդ նկարագրել եմ այն, ինչ որ հանդիպել է ինձ ընթացքումս: Բայց որովհետև Դարալագեազում ամենից յաճախ հանդիպել են ինձ ամենատեսակ հնութիւններ, ուստի սոքա, բնականաբար, պէտք է ամենից շատ գրաւէին ուշադրութիւնս:

Հնութիւնների, մանաւանդ վանքերի նկարագրութիւններին տուածս ձևն այնպիսի է, որ ինձանից պահանջում էր չափազանց մեծ ույժ: Ես ցանկացել և արել եմ այնպիսի նկարագրութիւն, որ այս կամ այն մենաստանի տեղն, սկիզբն, անցեալն և ներկայն այնքան ամբողջացած լինի, որ կազմուի նորա պատմու-թիւ-նը, որպէս զի ապագայի համար մնայ գոնէ պատմութիւնը՝ փոխանակ աւերակների, որոնք արդէն անհետանալու վերայ են:

Իսկ պատմութիւնը կազմելը հեշտ բան չէր, մինչև անգամ մեծամեծ դժուարութիւններ էին յառաջ գալի: Պահանջւում էր ջնջուած կամ մամռակալած արձանագրութիւնները կարդալ և արտագրել կիզող արևի կամ ցրտաշունչ ձիւնի տակ, շատերը հանել գետնի տակից, շատերի մօտ բարձրանալ վտանգաւոր միջոցներով և կամ կախուել թոկերի կապերով, քաղուածք անել պատմական աղբիւրներից:

Պատմական աղբիւրներ ձեռք բերել Շարուրի պէս դէն ձգուած, Աստծուց մոռացուած երկրում չափազանց դժուար էր: Բաւական է յիշատակել, որ այս կամ այն տեղեկութիւնը որոնելու Ինճիճեանի հնախօսութեանց մէջ, ես հարկադրուած էի երբեմնակի, Շարուրից 40 վերստաչափ հեռաւորութեամբ, գնալ փոռ գիւղը տիրացու Յակոբի մօտ:

Աղբիւրներից օգտուելու միջոցին պատահում էին որ և է նիւթի մասին, իմ կարծիքով, սխալ կամ ուղիղ կարծիքներ: Իբրև պատմութիւն կազմող, ես պարտաւոր էի քննութեամբ զետեղել այդ տեղեկութիւնները որպես զի ընթերցողը հարկադրուած չլինի ինքն որոնելու այդ աղբիւրները և ժողովածս տեղեկութիւն-

ները ես զետեղել եմ պատմութեան և ոչ ծանօթութեանց մէջ։ Ահա այսպիսի՝ երբեմն հակասական կարծիքները յիշատակելով պատմութեան մէջ՝ չպէտք է առիթ լինին ենթադրելու որ ես նպատակ եմ ունեցել «պօլեմիկ» սկսելու նախորդ ճանապարհորդների հետ։

Եթէ ճակատագիրը որ և է ընթերցողիս կձգի իմ նկարագրութեանց տեղերը՝ մանաւանդ Դարալագեազ՝ այն ժամանակ նա՝ ընթերցողը՝ կհամոզուի որ իմ նկարագրութիւնս մի լիակատար ուղեցոյց է և կազմած է այն ձևով՝ որ ամէն մի վանքի կամ աւերակի պատմութիւն կարելի է առանձին բրօշիւրով հրատարակել։

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

Վ Ե Ր Ջ.

ԼԱԶԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ԱԴԱՆԱՅԻ ՎԻԼԱՅԷԹԸ

ԿԱՄ

ԿԻԼԻԿԻԱ

Կոնիէից (Իկոնիոն) արեւմուտք՝ հիւղերի և խրճիթների նօսր խմբերը, որոնց քաղաք անունն են տալիս, յաջորդաբար շարուած են Տաւրոսի հիւսիսային ստորոտում, ուր լեռներից իջնող մաքուր ջրերի առուակները դեռ չեն ցամաքել և անդերի եղանակին բնիկները՝ սահմանակից լինելով բարձր արօտատեղերին, ամառը սարը բարձրանալու դիւրութիւնն ունին։ Երբեմն Կարամանեան նահանգի մայրաքաղաք Կարամանը գտնւում է արդէն գրեթէ լեռների սրտում, 1900 մետր բարձրութեան վրայ ծովի մակերևոյթից։ Առակլին (Էռէկլի, Հերակլիա) հազիւ 1000 մետր բարձրութեան վրայ գտնուի, բայց իւր տները խմբուած են մի բլրի վրայ, որ ճահճային սահմանագծից բարձր է։ Կարաբունար կամ Սև-Աղբիւրը բոլորովին անբնակ է մնում ամառը, բնակիչները թողնում են լճային փոսորակի աղի և բորակի շահագործութիւնը, բարձրանալով Կարաջա-դաղի եայլաները։ Վերջապէս Նիգդէ'ն (Նիկաէ), աւազանի արևելեան ծայրում, մօտ 1500 մետր բարձրութիւն ունի և գտնւում է Ալա-դաղի (Ալլահ-դաղ) հանդիպադօտու ոտքում։ Ոչ հեռու կանգնած է Կըզ-Հիսար, «Աղջկայ ամրոցը» կամ Քիլիսէ-Հիսար, «Եկեղեցու ամրոցը» «Շամիրամի

խճուղու վրայ, ուր շինուած էր նախկին Տիանան, Ապոլոնիոս մոգի հայրենիքը: Համիլտոն հետաքննին ճանապարհորդը կարողացաւ որոշել Տիանայի դիրքը գտնելով այն ցայտող աղբիւրը, որը հին հեղինակները նկարագրում են Ասմաբէոս անունով: Այս ակը, որ նուիրուած էր Արամազդին, մի սովորական, աղտագի, թթուակի ծծմբային ջրաւազան է, որի կեդրոնական շատրուանը ձգւում է մօտ 50 հարիւրամետր մակերևոյթից բարձր, առանց երբէք աւազանից դուրս զեղանելու: Անտարակոյս այս ջրաւազանը նոյն կազմուածքն ունի, ինչ որ մեր սովորական շատրուանները. հեղուկը դուրս է ցայտում կեդրոնական մի բացուածքից և դուրս ծորում յատակի ճեղքուածքով: Հին ժամանակներից ի վեր Իկոնիոնից Տիանա ձգւող առևտրական և ռազմական ճանապարհը կորանում է աղեղնաձև՝ անցնելով լեռների ստորոտից՝ Լարանդայով և Կիւբիստրայով, այն է՝ Կարամանով և Էռակլի'ով: Աւելի վեր՝ հիւսիսում՝ աղի ճահիճները, պաշարեղէնի և մաքուր ջրի պակասութիւնը ճանապարհը տաժանելի են դարձնում և գրեթէ անկարելի դարձնում մեծ բազմութեամբ և այդտեղով ճանապարհորդելը: Այսպիսով կատարելապէս զուգահեռական են դառնում միմեանց ծովափի գծագրութիւնը, եզերական լեռների կատարները և վերին բարձրաւանդակների գլխաւոր ճանապարհը: Այս գաւառներում անգլիացի ճանապարհորդ Դէւիսը (Davis) նորերս գտել է հետտիտեան արձանագրութիւններ:

Ներքին Անատոլիայից անջատուած բարձր լեռներով Քարային Կիլիկիայի փոքրիկ նաւահանգիստները չունին առաջուայ գործնէութիւնը, երբ բազմամարդ Կիպրոսի վաճառականութեամբ էին փարթամացած: Ալայա'ն, նախկին Կորակեսիոնը մի կուչ եկած գիւղ է կղզային ժայռի ստորոտում և ցամաքի հետ միանում է մի աւազային պարանոցով: Սելինտի'ն, յոյների Սելինոսը, մի խեղճ գիւղակ է: Անեմուրիոնը, որ գտնւում է փոքր Ասիայի ամենահարաւային հրուանդանի վրայ, մի ընդարձակ գերեզմանոց է միայն, իսկ Անամուռ (Անեմուռ) գիւղաքաղաքը՝ աւերակներից փոքր ինչ հեռուն՝ շինուած է մի հեղեղատի բերանում: Աւելի

Զալինտրէ փոքրիկ ծովածոցը, հների կելենդրիսը, Կիպրոս կղզին հեռուն գնալու սովորական նաւահանգիստն է: Պրովանսալ նաւահանգստի քարաժայռի վրայ, որ երբեմն ամրացրած էր Հռոդոսի ասպետներից, այլևս ոչ ոք չէ բնակւում: Նախկին Սիլևկիան (Սելևկէ)՝ Գեօկ-Սուի — կալիկադնոսի գետաբերանում, տնակների մի կոյտ է միայն:

Առևտրական շարժումը ստիպուած էր տեղափոխուել դէպի արևելք՝ Դաշտային Կիլիկիայի ծովափունքը, ուր գալիս հանգչում է փոքր Ասիայի անկիւնագծային ճանապարհը և ուր բերրի դաշտեր և հովիտներ մշակութեան յարմար ընդարձակ գօտի ունին: Այս գաւառի վաճառաշահ նաւահանգիստը՝ Մերսինա՛ն այս դարի կիսին խրճիթների մի փոքրիկ խումբ էր, շրջապատուած մրտենիներով, որից և ստացաւ իւր անունը, իսկ այժմ մի վաճառաշահ քաղաք է և իւր նաւահանգիստը՝ որ չափազանց ենթարկուած է ծովամիջի քամիներին, պաշտպանուած է արուեստական քարափներով (quai) և թումբերով 1): Քաղաքը մասամբ շինուած է մարմարի կտորներով, որ ընկած էին հողի երեսին հին յունական քաղաքի փլատակներից: Մի քանի քիլոմետր արևմուտք ուրիշ աւերակներ ցոյց են տալիս Արգիայիների Սոլի քաղաքի տեղը, ուր խօսւում էր այն աղճատ լեզուն, որից առնուած՝ խօսքի սխալ և անկանոն դարձուածները կոչւում են «Սոլէսիզմ»—Սոլաբանութիւն: Աւելի հեռուն երևում են Պոմպէուպօլսի հռոմէական սիւնաշարերը, որ առաջնորդում էին դէպի մի ձուաձև նաւահանգիստ, որի պատնէշները շատ լաւ պահպանուել են, բայց տիղմը լցրել է նաւահանգիստը և ծովափի հողակոյտերը երկարել փակել են խորշի մուտքը: Շատ կէտերից հետաքրքրական յիշատակարան է Դիրէկլի դաշտը կամ «կանգուն քարը», որ մի ահագին կոթող է, թերևս անդրպատմական դարերում կանգնեցրած: Լանգլուայի ասելով՝ այս վէմը, որի ստորին մասը մաշուել է ուղտերի քսուելով և քորուելովը, 15 մետր

1) Մերսինա նաւահանգստի առևտրական շարժումը 1880 ին=110,000 տակառաչափ:

բարձրութիւն ունի, իսկ զանգուածի ծաւալը՝ 120 խորանարդ մետր [1]), կշռում է առնուազն 300 տակառաչափ և կարող է համեմատուել Բրիտանիայի վիթխարի մեծավէմերին (մեգալիթ)։ Արդեօք սա մի մենհիր է կամ գուցէ այն միապաղաղ կոթողներից, որ սովորաբար կանգնեցնում էին փիւնիկեցիները զոյգ զոյգ իրենց տաճարների մուտքի առաջ [2])։

Մի նոր փառաւոր ճանապարհ միացնում է Մերսինան Տարսոն և Ադանա քաղաքներին։ Տարսոնը գտնւում է Կիւդնոսի կամ Տարսոնի գետի աջ ափում, Բուլգար-դաղի հանդիպագօտու վերջին ստորոտում զառիվայրերի վրայ։ Փոքր Ասիայի համբաւաւոր քաղաքներից մէկն է, ամենամեծ հնութեամբ պարծեցող։ Արևելեան մի աւանդութեան նայած, այս քաղաքի բռնած տեղը առաջին դաշտն էր, որ ցամաքեց երբ որ ջրհեղեղի ջրերը յետ քաշուեցան։ Քանի որ սիկահոլը չէր լցրել նաւահանգիստը և Կիւդնոսը դեռ նաւարկել էր՝ Տարսոնը հիանալի դիրք ունէր վաճառականութեան կեդրոնավայր դառնալու համար, Ասորիքի և Փոքըր Ասիայի միջև՝ Կիլիկիայի նաւահանգիստներով, որոնց մուտքն էր պաշտպանում։ Կեսարի և Օգոստոսի ժամանակ նա դիմացը ծովի միւս կողմում գտնուող Աղեքսանդրիայի ախոյեանն էր։ Իւր դպրոցները աշխարհի ամենալաւերն էին համարւում, մինչև անգամ Աթէնքի դպրոցներից բարձր։ Իւր իմաստասէրները գնում էին Արևմուտքում իրենց գիտութիւն տարածելու [3])։ Քաղաքը շատ ճոխացաւ և շքեղացաւ, Մարկոս Անտոնիոսը նրան իւր ասիական կայսերութեան մայրաքաղաքը դարձրեց, ուր և ամուսնացաւ Կլէոպատրայի հետ։ Յուլիոսը թաղուեց Տարսոնում։ Բայց պատերազմները աւերակ դարձրին այս քաղաքը, որի միջով հոսող գետը հեռացաւ դէպի արևելք և դադարեց նաւարկելի լինելուց, նաւահանգիստը լցուեց տղմով և Տարսոնը անջատուեց

1) Victor Langlois, Voyage dans la Cilicie.

2) G. Perrot, ձեռագիր։

3) Heuzy, Académie des Inscriptions et Belles-lettres, 7 juillet, 1876.

ծովից։ Իւր նախկին փառքից ոչ մի հետք չէ մնացել, հազիւ երբեմն բլրի տակ գտնւում են հնադարեան մնացորդներ։ Ամենահետաքրքրական շինուածքը մի մզկիթ է, որ ըստ աւանդութեան շինուած է ճիշդ այնտեղում, ուր ծնուեց «հեթանոսների առաքեալը՝ Պօղոսը։ Պարիսպների մօտ գտնուել է մի ահագին մթերանոց կաւաշէն, թրծուն, փոքրիկ, ուխտանուէր արձանների— թերափների, հաւանականաբար այդտեղում գտնւում էր այս որբազան առարկաների մի գործարան 1)։ Մեկքայից և Երուսաղէմից յետոյ մուսուլմանների ամենագլխաւոր ուխտատեղիներից մէկը Տարսոնի շրջակայքում մի քարայր է, այն բազմաթիւ քարանձաւներից մին, ուր ըստ աւանդութեան բնակուեցին «Եօթը Ննջողները» 2)։

Ամառը քաղաքը շատ վատառողջ է դառնում և կարողւոր բնակիչները խոյս են տալիս դէպի Բուլգար-դաղի հովիտները, Իշմէ'ի ջերմուկները, Կոզնէ, Նեմրուն, Գիւլլէկ-բողազ, Կիլիկեան Դռների մօտ։ Տարսոնի գեղեցկութիւնը իւր ընդարձակ պարտէզըն է՝ կանաչազգեղ գօտին, որով շրջապատուած է և ուր ցրիւ են ընկած փշրուած կամարներ, կիսակործան սիւներ, որ հռովմէական ջրմուղի մնացորդներն են։ Բայց այս բոլոր աւերակները չնչին են երևում, երբ որ մի ստուերախիտ շաւիղի դարձուածում յանկարծ մի ահագին քարի՝ «Թաւալուած վէմի» Դէօնիւկ-տաշի դիմացն ես գալիս։ Այս լայնածաւալ քառանկիւն քարաշէնքը, որի մէջը դատարկ է, թւում է մի վիթխարի միապաղաղ զանգուած։ Կիւդնոսի ափից նայած՝ կիպարիսների և պտղատու ծառերի ճիւղերի միջից այս «քարը» նման է աւազաքարի ժայռի, կարծես բնութեան գործը լինի, ինչպէս այդ յաճախ պատահում է երկրաբանական ուժերից յեղաշրջուած երկրներում։ Այս տարօրինակ շինուածքը՝ ակներև է՝ որ շատ հին է և մերձաւորապէս 90 մետր երկարութիւն ունի, առանց հաշուելու կողմնա-

1) Lion Heuzy;—Burckhardt Barker, Lares and Penates.

2) V. Langlais, յիշուած։

կի շինուածքները, լայնութիւնը 42 մետր է և բարձրութիւնը՝ 8 մետր։ Սպիտակ մարմարի սալերը, որ ծածկում էին պատերի երեսը, ցրուած են գետնի վրայ։ Ինչպէս որ հին դրամներից երևում է այդ ահագին զանգուածը իբրև պատուանդան է ծառայել մի թագաւորի արձանին, որ ունեցել է աղեղ և կապարճ և կանգնած է եղել մի խորհրդաւոր և եղջիւրաւոր կենդանու վրայ։ փորուածքներ կատարուեցան, բայց չյայտնուեց ոչ տարեթիւը և ոչ այդ շինուածքի ինչ բանի համար նշանակուած լինելը։ Ոմանք գիտնականներից համարում են այդ պատգամախօսութեան տեղ։ Հնաբան Լանգլուան հիմնուելով Ստրաբոնի մի ասացուածի վրայ կարծում է թէ այդ առաջին Սարդանաբալի, որ Կիլիկեա փախաւ իւր պետութիւնը կորցնելուց յետոյ, շիրիմը լինի։ Անտարակոյս այդ շինուածքի կատարին դրուած էր այն միթխարի, ասորեստանական ոճով արձանը, ինչպէս որ այդ նկարուած է տարսոնական բազմաթիւ դրամների վրայ 1)։

Ադանան հին Տարսոնից խլեց նրա առևտրական կարևորութեան մի մասը։ Տարսոնի պէս գանուելով ամենաբերրի երկրում, շրջապատուած պարտէզներով, բամբակի և շաքարեղէգնի արտերով՝ սա էլ նմանապէս շինուած է փոքր Ասիայի անկիւնագծային մեծ ճանապարհի վրայ։ Այստեղում Սարոսը կամ Սիհունը, որ հոսում է դէպի արևելք, դուրս է գալիս դարևանդներից և մըտնում է ընդարձակ սիկահողային դաշտը, որ տարեցտարի աճում է, թէև ոչ մեծ չափով, Կիպրոսի և Ասորիքի ուղղութեամբ։ Իւր՝ և իւր օժանդակների վերին հովիտները մի մի ճանապարհ և անցք են դէպի Կեսարիա և Կըզըլ-Իրմակ։ Միւս կողմից՝ Պիւռամիս կամ Ջիհուն գետը այնչափ մօտենում է Ադանային, որ այս քաղաքը կարող է համարուիլ բնական կեդրոնավայր և հրապարակ այդ գետերի ամբողջ աւազանին։ Այստեղ է վերջանում Եփրատի վերին աւազանի և Կիլիկիայի ծովափների պատմական ճանապարհը։ Բացի այս՝ Սիհունը փոքր Ասիայի գրեթէ բոլոր գետերից այն ա-

1) G. Perrot, Métmoires d'Archiologie, d'Epigrahie et d'Histore.

ռաւելութիւնն ունի, որ նաւարկելի է իւր ստորին հոսանքում և Կիպրոսում ու Սորիքում բարձուած նաւերը կանգ են առնում քաղաքի գետափի առաջ։ Իւր դաշտերի պտղաբերութեամբ և ճանապարհների կեդրոնացման շնորհիւ Ադանան դարձել է մեծ առևտրական կեդրոն և մտածում են արդէն մի նեղագիծ երկաթուղի շինել, 60 քիլոմետր երկարութեամբ, նրան Տարսոնով Մերսինայի նաւահանգստի հետ կապելու համար։ Ադանան թէև աւելի առողջ կլիմայ ունի քան թէ Տարսոնը, այսուամենայնիւ վտանգաւոր է այդտեղ մնալը ամառնային եղանակին, ուստի և շրջակայ լեռների գիւղերը ամառը լցւում են եկւորներով։

Սարոսի վերին հովտում հայկական Հաճին քաղաքից դէպի Հիւսիս, Սըւազ (Սեբաստիա) և Ադանա նահանգների սահմանագծի վրայ, ոչ հեռի Նոր Ազիզիէ քաղաքից, Սար կամ Սարտիրէ փոքրիկ գիւղաքաղաքը, շինուած է նախկին Կոմանայի տեղում։ Կոմանան կոչւում էր նաև Հերապոլիս կամ «Սուրբ քաղաք»։ Աւերակներին իշխող սարը մինչև այժմ էլ անուանւում է Կումենէկ-Թեփէ, բայց Կոմանայի բուն անունը դեռ ևս չէ գտնուել յիշատակարանների վրայ։ Բոլոր շինութիւնները, տաճարները, թատրոնները, ասպարէզները, մրցարանները (գիմնազիոնները) հելլէն-հռովմէական ժամանակից են մնացած, սակայն սրբարանները, երևի սրբազան սովորութեանց աւանդապահ մնալով, աւելի եգիպտական քան թէ յունական կերպարանք ունին։ Բուն տաճարը ոչ մի սիւն չունի և քրմերի բնակարանները շրջապատում են նրան առանց ճարտարապետական որ և է ամբողջութիւն կազմելու։ Քաղաքին նայող լեռների ուղղաձիգ զառիվայրերի վրայ բացուած կան քարանձաւներ, իսկ ներքևում հարուստ դաշտն է փռուած, որ Ստրաբոնի ժամանակ մշակւում էր վեց հազար ստրուկներով [1]։

Սարոսի և Պիւռամոսի վերին հովիտներում կազմակերպուած թուրքմանական Կոզան-օղլու և Մենեմենջ-օղլու իշխանութիւնները կորցրին իրենց անկախութիւնը։ Դեռ այս դարի կիսին նը-

---

1) Korolidis, Կոմանան և իւր աւերակները (Նոր յունարէն)։

րանք ենթարկւում էին Թուրք տէրութեան գերիշխանութեանը միմիայն անւանական հպատակութեամբ։

Ջիհունի վերին աւազանի գլխաւոր քաղաքն է Ալբիստանը, որ յաճախակի անւանւում է բառախաղով նաև Էլ-բոստան, այն է՝ «Պարտէզ»։ Ի՛սկ որ նա թաղուած է կանաչութեան մէջ։ Ընդարձակ և լաւ ոռոգուած դուրանը, ուր մեռնում—վերջանում են շրջակայ լեռների դարատափների վերջին մեղմ ալիքները, թւում է նախասահմանուած մի մեծ քաղաքատեղ լինելու վերին Եփրատի և Ծոփի առևտրի համար։ Այս դաշտումն են միանում Ջիհունի բոլոր վերին օժանդակները, որ յետոյ սեղմւելով անթիւ կրճերում անցնում են Աղըր-դաղի ահագին խորաձորով։ Բայց բնիկների համար այս հեղեղատներից և ոչ մին բուն գետը չէ։ Նրանք, ինչպէս և ամեն ժողովուրդ, բնազդմամբ նախապատւելով մշտաբուխ աղբիւրները, Ջիհունի բուն ակն են համարում մի փոքրիկ ջրաւազան, ուր գեռում են խորին ճեղքուածքներից դուրս ցայտող ջրերը, առանց աւելանալու կամ նւազելու, և գալիս ջրում են պարտէզները։ Ալբիստանում կան մի քանի հայ ընտանիք, իսկ հարաւ-արևմուտքում մի հայկական դաշնակցութիւն՝ բաղկացած վեց փոքրիկ հասարակապետական հասարակութիւններից պահպանւել է գրեթէ մինչև մեր օրերը Զէյթունի կամ «Ջիթենիների» բարձր հովտում։ Թէև այդ լեռնային երկրում՝ որ առնւազն 1500 մետր բարձրութիւն ունի, ձիթենիներ չեն բուսնում։ Գրեթէ գլխովին վատթարացած — տաճկացած հայկական աշխարհում այս ազատ լեռնացիների հասարակութիւնը մի բացառիկ երևոյթ է, լեռնացիների, որ դարերով պահպանել են իրենց անկախութիւնը։ Մերձաւորապէս տասն հազար հոգու չափ այս կատաղելապէս զինավարժ հայկեանները ամրացրել են իրենց երկիրը կրճերում շինուած մի քանի բերդերով և կար ժամանակ որ ոչ մի մուսուլմանի չէին թոյլ տալիս իրենց մօտ ներս մտնելու։ Ալբիստանի փաշայից ոչ մի հարկ չէին տալիս բացի դաշտավայրում մշակած արտերի վարձից [1])։

1) Carl Ritter, Asien, vol. XIX.

Մարաշը՝ որի բնակիչների կէս մասը հայեր են, յենուած է Ախըր-դաղի հանդիպադօտուն, որ իշխում է Ակ-սուի և Ջիհունի գետախառնուրդին, ճիշդ այն տեղում, ուր Ջիհունը դուրս է պրծնում՝ իւր մեծ խորաձորից: Մարաշը արուեստաշահ քաղաք է, այստեղի կանայք կտաւեղէններ են գործում և արծաթ ու ոսկով բանուած կտորներ: Ամառը վիլայէթի ժամանակաւոր մայրաքաղաքն է դառնում: Այստեղ է գալիս փաշան եայլա, երբ որ շոգերից ստիպուած թողնում է Ադանան՝ դշլադը: Հարաւարևմուտքում՝ Ջիհունի հովտի արևմտեան կողերի վրայ գտընւում է Սիսը, որ մի փոքրիկ քաղաք է. շինուած զառիվայր ապառաժի լանջին և ստորոտում: Սա էլ մի ժամանակ մայրաքաղաք էր, այստեղ էր Հայաստանի (Կիլիկիայի) թագաւորների նիստը. երկու դար շարունակ՝ 1182-ից մինչև 1374-ը, ուր և երևում են մինչև այսօր Դարբասի, այն է՝ թագաւորների պալատի մնացորդները: Սիսը դադարելով թագաւորանիստ լինելուց՝ մնաց կրօնական կեդրոնավայր. նրա մենաստանում գահակալում է մի պատրիարք (կաթուղիկոս), որին Թուրք կառավարութիւնը կամեցաւ, ախոյեան կացուցանել Էջմիածնի ուսահայատակ կաթուղիկոսին: Շրջակայքի բոլոր եպիսկոպոսները ուղարկում են Սսի եպիսկոպոսարանին իրենց գիւղացիների վճարած տասանորդները: Դէպի Ջիհուն իջնող ճանապարհին մի բլրի վրայ կանգնած է Անազարբա ամուր բերդը, մուսուլմաններին Հային Զարբան, որ Սսից առաջ նոյնպէս Հայ թագաւորների աթոռանիստն էր և իւր հռովմէական աւերակներով համբաւաւոր: Երկու հնադարեան ջրմուղներ, թէև տեղ տեղ կործանուած և զըրկուած իրենց քանդակներից և արձանագրութիւններից, այսուամենայնիւ հոյակապ յիշատակարաններ են և երևում են ձգուած մօտաւորապէս 12—20 քիլոմետր երկայնութեամբ, մինչև դաշտի վերևի լեռները հիւսիսում և հիւսիս-արևմուտքում [1]: Նըրանց բեղմնաւորիչ ջրերը շրջակայքի անապատը դարձրել էին անսահման ծառաստան, այնպէս որ ստամերոսը դարում Եգիպ-

---

1) Texier, Revue Française, 2838;—Carl Ritter, Asien, XIX.

օրն կարողանում էր Անատոլիայի դաշտերը համեմատել Դամասկի «Դրախտի» հետ։

Ադանայից արևելք՝ նախկին Մոպսուեստը, խաչակիրների Մամիստրան, հայերի և թուրքերի Միսը հսկում է Պիւրամոսի անցքին, ուր ձգուած է մի հնօրեայ կամուրջ։ Այստեղից արդէն մօտ է Թերակլղու հիմքը և Ջեբէլ-Նուր'ի կամ «Լոյսի լեռների» գահավէժները գծում են երկու աշխարհների՝ փոքր Ասիայի և Ասորիքի՝ բնական սահմանը։ Այս միջավայրում խմբուած են ամէն ազգերից՝ թուրք, յոյն, հայ, քուրդ, արաբ, չերքէզ, անսարի, խափշիկ և բօշա։ Մոպսուեստը յունական աշխարհի վերջին ծայրն է և իւր կրօնների խառնուրդով պատկանում էր միանգամայն թէ Ասորիքին և թէ Ներքին Ասիային։ Իւր Ապոլոնը աւելի Արևելեան բահաղ էր քան թէ յունական աստուածութիւն։ Այս քաղաքը բոլոր աստուածների համար մի սրբարան ունէր և պաշտողներ։ Սրա նման էր և Էգէա'ն (Այաս, Լայացցո), «Ալեքների քաղաքը», որ շինուած էր Ալեքսանդրետոկի ծոցի (Հայոց ծոց) հիւսիսում և միախառնել էր Միջերկրականի աւազանի բոլոր կրօնները։ Խաչակիրների պատերազմների ժամանակ, երբ որ Խալէպի ծովագնացները Այասը դարձրին իրենց գլխաւոր մթերանոցը, նա քրիստոնէական քաղաք դարձաւ։ Կիլիկեան Նաւահանգիստը՝ որ յաջորդեց նրան, գտնւում է մի քանի քիլոմետր դէպի արևմուտք, ոչ հեռու Պիւրամոսի բերանից, որ և այժմեան Եումուրթալիկ գիւղաքաղաքն է և որն ուզում են կապել Ադանայի հետ երկաթուղու մի ճիւղաւորութեամբ, որը սակայն հարկ կ'լինի պատսպարել գետի տիղմերից, մղելով գետի ընթացքը դէպի արևմուտք 1)։ Այասը և Եումուրթալիկը այն նաւահանգիստների թւումն, որտեղից ենթադրւում է սկսել Միջերկրականից մինչև Պարսկական ծոցը ձգուող երկաթուղին։ Այստեղով ճանապարհը կերկարի փոքր ինչ, բայց շինողներին աւելի հեշտ կլինի Ամանոսի զառիվայրերից երկաթագիծն անցկացնել աւելի դիւրին տեղերով։

Ջեբէլ-Նուրի արևելեան կողերում ծովածոցից հիւսիս դէպի

---

1) Ed. Dutemple, En Turquie d'Asie.

երկրի ներսերը առաջացող ջրային կամարի ամենավերին ծայրի մօտ երկու ժայռ՝ միացած սև հաստաքարի (գրանիտ) գեղեցիկ կամարակապով սեղմում են ճանապարհը նման Գիւլլէկ-բողազին։ Սա էլ մի ուրիշ «Կիլիկիայի Դուռն» է, որ կոչւում է նաև «Լանկ-Թամուրի դուռ», «Երկաթի դուռ», «Սև դուռ» կամ կարա-կափու։ Ո՜րչափ մարդիկ են կոտորուել այս նեղ անցքին՝ որ Ասիայի ճանապարհների դուռն է, տիրելու համար։ Նախապատմական ժամանակներից սկսած ո՛չ մի դար չէ եղել, որ այստեղ ճակատամարտներ տեղի չունենային 1)։

ՄԻԱԲԱՆ։

(*Կը շարունակուի*)

---

1) *Ադանայի վիլայէթի քաղաքները իրենց բնակիչների մօտաւորական թուերով.*

Ադանա, ըստ Փաւր և Մանդրոյ'ի	45 000	*բնակիչ։*
Մարաշ	24 000	»
Տարսոն, ըստ Geary-*ի*	12 000	»
Հաջին	10 000	»
Մերսինա, ըստ Geary-*ի*	6 000	»
Սիս	5 000	»
Ալբիստան	3 000	»

ԽՕԼԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

Այն հիւանդութիւնը, որը այժմ վտանգ է սպառնում մեր երկրին «ասիական խօլերն» է, որը՝ համաճարակ լինելով՝ իւր երեւան գալովը՝ շատ զոհեր է տարել մարդկութիւնից. բայց նրա մօտիկ ուսումնասիրութիւնը՝ կարծես թէ՝ մօտ ապագայում պէտք է վերջ դնէ նրա վտանգաւոր լինելուն:

Ինչո՞ւ համար խօլերը կոչվում է ասիական: Այս նրա համար է, որովհետեւ՝ նախ՝ այս ցաւի ծննդատեղը Ասիական Հնդկաստանն է, երկրորդ, կայ եւ՝ այսպէս ասած՝ մեր խօլեր (cholera nostros) հիւանդութիւնը, որը նման լինելով նոյն յատկութիւնը չունի:

Ասիական խօլերը բարակ աղիքների լորձնաթաղանթի առանձին տեսակի սուր բորբոքումն է, որին միանում են եւ վարակուածութեան երեւոյթներ, որոնք գլխաւորապէս հարուածում են առաջին կարգում նեարդային համակարգութիւնը:

Խօլերի երեւոյթները որոշ կարգով են արտայայտվում, որով իրաւունք ենք ստանում հիւանդութիւնը բաժանել ջոկ ջոկ շրջանների: Բացի սրանից այս երեւոյթները առանձին դիպուածներում տարբեր խմբակցութիւն կազմելով, ներկայացնում են հիւանդութեան ընթացքի զանազան պատկերներ:

Սկզբնական շրջանում գլխաւոր երեւոյթներն են ստամոքսի եւ աղիքների երեւոյթները:

Երկրորդ շրջանում հարուածվում է գլխաւորապէս նեարդային համակարգութիւնը: Այս այն շրջանն է, երբ հիւանդութիւնը հասնում է իւր գագաթնակէտին:

Երրորդ շրջանով հիւանդութիւնը վերջանում է:

Բ.

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Եթէ մի մարդ հիւանդանում է մեր աչքի առաջ, մենք նկատում ենք, որ հիւանդացողը 2, 3 օր տկար է զգում իւրեան ընդհանրապէս. սակայն այս հանգամանքը մեր աչքից փախչում է, մանաւանդ եթէ սովոր չենք մի որ և է հիւանդութեան նշանները ժողովել և դասաւորել նրանց, գտնելով նրանց մէջ ներքին կապ:

Մինչդեռ հիւանդը իւրեան անհամապատասխան թոյլ է զգում, քանի որ դեռ ուրիշ մի բան չկայ, մեր ուշադրութիւնը գրաւում է, երբ երևան է գալիս խօլերի կոյշը փորլուծութիւնը:

Մեզ թւում է թէ՝ հէնց սրանով է սկսւում հիւանդութիւնը: Դուրս գնալը (հարկաւորութիւն) ամեն դիպուածում միաչափ չէ. ընդհանրապէս սկզբում օրը 3 կամ 4 անգամ է դուրս տանում: երկար միջոց անցնելուց յետոյ այս կրկնվում է: Կոյշի հետ միասին պատահում է՝ թէև ոչ միշտ՝ և փսխելը, որ յաճախ առաջին շրջանի սկզբումն է լինում քան վերջում: Եթէ հարկաւորութիւն գնալը շուտ շուտ է լինում կղկղանքը խաշած բրնձի ջրի գոյն է ստանում:

Օրուայ ընթացքում զանազան քանակութիւնով կղկղանք է դուրս բերվում: Քանի՞ անգամ է դուրս տանում այդ էլ տարբեր է լինում: Կոյշը առաջի շրջանից 3, 4, 6 նաև 7 օր առաջ է յայտնվում. բայց պատահում է, որ կոյշը երևան է գալիս առաջի շրջանի վերջումը: Սրտի գդալի տակ զգացվում է ծանրութիւն և ճնշողութիւն, երբեմն ցաւ է տալիս. փորն էլ գոգւում է, որովհետև աղիքներում շատ ջուր և գազեր են շարժվում:

Երբ գալիս է այն ժամանակը, որ յանկարծ մեծ քանակութիւնով կղկղանք է դուրս բերվում, որ յետոյ իրար եւեւից յաճախ կրկնվում է, այս երկրորդ շրջանն է, որ ասվում է և սառած շրջան. մինչդեռ՝ ընդհակառակը՝ առաջին շրջանում՝ ինչպէս վերը յիշեցինք՝ ամեն հարկաւորութիւն տանելուց երկար միջոց է անցնում մինչև միւսը, և այնքան առատ չեն արտաթորութիւնները: Իսկ սառած շրջանում շուտ շուտ և առատ դուրս է տանում, լինում է և փսխել:

Յետոյ մարմինը սառչում է դրսից, կապտում է, մորթին կնճռոտում է, աչքերը խորն են ընկնում: Գիտակցութիւնը թէև չէ կորչում՝ բայց սաստիկ անզօրութիւն է նկատվում: Ձայնը խզըվում է, գրեթէ կորչում է, մեզը կապվում է, մկանունքները կծկվում են՝ յառաջանում են ցնցումներ, որ՝ երկար ժամանակ արանք տալով՝ կրկնվում է: Շնչառութիւնը արագանում է, հասնում է մինչև անգամ սաստիկ շնչարգելութեան: Սառած շրջանը մի օրում հասնում է իւր բարձր կէտին: Այս դրութիւնը կարող է տևել 2 կամ 4 օր՝ եթէ բժշկականութիւնը կարողանում է կռւել հիւանդութեան դէմ՝ որքան կարելին է: Բայց յաճախ այս շրջանում հիւանդները շնչասպառութիւնից կամ նւաղութիւնից պակասում են:

Սակայն բարեյաջող դիպուածներում, երբ՝ իւր ժամանակին— հիւանդին հասցրած օգնութիւնը անօգուտ չէ կորչում, սառած վիճակը թուլանում է կամաց կամաց, սկսւում է երրորդ շրջանը, տաքութիւնը վերականգնւում է, և արիւնի շրջապարձութիւնը կանոնաւորւում է. ձայնը և մէզը բացւում են շատ շուտով. և այս լինում է այն ժամանակ, երբ դեռ հիւանդը ջուր չէ խմել բաւական քանակութիւնով:

Այսպիսով ընդհանուր տեսարանը փոխվում է կարճ ժամանակում մեր աչքի առաջ: Այս ցոյց է տալիս, որ հիւանդութիւնը վերջանալու վրայ է. տաքութիւնը տատանւում է 37 *ու* 38 *աստիճանի մէջ, հազիւ կըպատահի սրանից բարձրանալ:*

Ախորժակը լաւանում է, աղիքները կանոնաւորվում են և 6—8 *օրից յետոյ մեր հիւանդը առողջանում է:*

Երրորդ շրջանը տևում է 6 կամ 8 օր, այնպէս որ վրայ 10—11-որդ օրը հիւանդը առողջացած է լինում։ Այսպէս է ընթանում խօլերը իւր տիպային ձևով։

Մի ուրիշը հիւանդանում է այլ եղանակով՝ խօլերով ճարակուածի կոյշը սկսում է կէս գիշերին. 3, 4 կամ և աւելի անգամ է պատահում դուրս գնալը. կղկղանքի գոյնը կանաչաւուն է, եթէ վերջինս առատ է, գունատ է լինում. դուրս գնալուց առաջ փորը գռգռում է. մէզը չէ կտրվում. կոյշը տևում է 1, 2 կամ 3 շաբաթ. ախորժակը վատ է, ծարաւը սաստիկ։ Այս երևոյթներով շատ նման է ստամոքսի հասարակ խանգարումներին. միայն մի բան, որ նկատւում է այստեղ՝ այդ հիւանդի սաստիկ թուլութիւնն է, որը կապ չունի կոյշի հետ, որովհետև հասարակ փորլուծութիւնը այնքան չէ թուլացնում այդքան կարճ ժամանակում։

Մի երրորդ հիւանդ ներկայացնում է մի այլ պատկեր՝ առաջին շրջանում կամ լինում է թեթև կոյշ կամ չէ լինում. բայց հիւանդը զգում է թուլութիւն, գլխի պտոյտ և ականջներում խշխշոց։ Երկրորդ շրջանում եթէ կոյշը եղել է, շարունակւում է սաստկանալ, իսկ եթէ չէ եղել, սկսւում է գիշերը, և այն էլ միանգամից, մեծ քանակութիւնով, փորացաւով. հիւանդը փսխում է։ Շատ անգամ նկատւում է սաստիկ ծարաւութիւն, ախորժակի կորուստ ընդհանուր թուլութիւն, ցնցումներ, տաքութիւնը նուազում է, բայց և այնպէս սառածութեան չէ հասնում. մէզը քիչանում է բայց չէ կտրւում։ Երկրորդ շրջանը այս դիպուածում տևում է մի օր, որից յետոյ հիւանդը անմիջապէս սկսում է լաւանալ։ փսխելը և կոյշը դադարում են, թուլութիւնը անցնում է և մարմնու տաքութիւնը կանոնաւորւում. մի քանի օրից յետոյ հիւանդը դրստւում է՝ մնում է մի փոքր թուլութիւն, որը մի քանի ժամանակից յետոյ անհետանում է։

Չորրորդ հիւանդը ակարանում է՝ այսպէս ասած՝ չոր խօլերով՝ որը իւր անունը ստանում է նրանից, որ աղիքներում շատ քիչ հեղուկ է լինում հաւաքուած, կամ բնաւ չէ լինում. իսկ հի-

ւանդը թուլութիւն է զգում, ախորժակը կորցնում է, անհանգստութիւն է զգում։

Հինգերորդ դէպքում հիւանդութիւնը այնպէս արագ է ընթանում, որ աննկատելի է դառնում շրջանների բաժանումը։ Այստեղ աչքի է ընկնում աւելի սաստիկ շնչարգելութիւնը ընդհանուր թուլութիւնը, ցնցումները և պաղելը։ Երկու երեք կամ տասներկու ժամուայ ընթացքում հիւանդը աւանդում է իւր հոգին։ Այս տեսակը կոչւում է կայծակնատիպ խօլերա, որ և ամենածանր տեսակն է. սակայն՝ բարեբաղդաբար՝ յաճախ չէ պատահում։

Գ.

ՄԻ ՔԱՆԻ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ.

Թէ ինչի՞ց է կախուած տաքութեան նուազումը, արիւնի շըրջագայութեան դանդաղումը և մեզարգելութիւնը։

Մենք տեսանք, որ խօլերայով հիւանդը սառչում է. ուրեմն մարմնու տաքութիւնը իջնում է, նուազում է։ Եթէ ջերմաչափը դնենք կռնատակին և թողնենք մնայ քառորդ ժամ, կտեսնենք որ տաքութիւնը իջել է մինչև 34'5 և 35'5 աստիճան (կանոնաւորը 37-^{0} է)։ Եթէ մի ուրիշ ջերմաչափ՝ միևնոյն ժամանակ՝ դնենք վարաղաղիքում և թողնենք մնայ քառորդ ժամ, ջերմաչափը ցոյց կտայ 42 աստիճան։ Սրանից հետևում է, որ՝ այն ինչ մարմնու երեսի տաքութիւնը պակասում է, ներսի տաքութիւնը աւելանում է։ Ի՞նչից է յառաջանում այս. ասումեն թէ՝ շատ ջուր կորցնելուցն է։ Բայց այս սխալ է, որովհետև միևնոյնը պատահում է և այն ժամանակ, երբ հիւանդը քիչ ջուր է կորցնում, այսինքն կղկղը սաստիկ չէ. կամ բոլորովին ջուր չէ կորցնում ինչպէս այս լինում է չոր խօլերի ժամանակ։ Եթէ մարմնու երեսի տաքութեան նուազելը կախուած լինէր ջուր կորցնելու քանակութիւնից, այն ժամանակ ներսի տաքութիւնը նոյնպէս նուազ կլինէր. մինչդեռ վերջինս աւելացած է։ Այստե-

ղից հետևում է, որ ներսում արիւնը կանոնաւոր կերպով է խաղում, և որովհետև չէ կարելի ենթադրել, որ արիւնի թանձրութիւնը զանազան գործարաններում տարբեր լինի. ուստի չէ կարելի թոյլ տալ, որ սառնութիւնը թանձրութեան աստիճանի փոփոխումի հետևանքն լինի:

Բացի սրանից պատահում է տեսնել, որ նրանք, որոնք վախճանուել են սառած շրջանում, մահից յետոյ մարմնու տաքութիւնը աւելացած է լինում: այս բանը չէր կարող պատահել եթէ սառչելը կախուած լինէր շատ ջուր և շուտ կորցնելուց:

Վերջապէս՝ երբ հիւանդը սկսում է դէպի լաւը գնալ, երբ սառած շրջանը անհետանում է երկու, երեք ժամում, և երբ դեռ մի կաթիլ հեղուկ չէ մտցրուած մարմնու մէջ, ջրի կորուստը լրացնելու համար տաքութիւնը բարձրանում է, այնպէս, որ ջերմութեան խանգարումները ջրի կորստի և արիւնի թանձրանալու հետևանքը չէ կարող լինել, քանի որ կորուստը լրացրած չէ: Այս խանգարումները արիւնի շրջագարձութեան տեղական փոփոխումներիցն է. իսկ սրանց պատճառը անօթային նեարդաշարժական խանգարումներն են 1):

Միւս երևոյթը՝ խօլերից յառաջացած խանգարումների շարքում՝ արիւնի շրջագարձութեան դանդաղելն է, որ քանի գնում, սաստկանում է. սրա ապացոյցը այն է, որ մարմինը պաղում է դրսից և կապտում է: Արիւնի հոսանքի այս դանդաղումը նոյնպէս կախուած չէ ջրային մասերի կորստից և հետևաբար արիւնի թանձրութիւնից, որովհետև հէնց որ սառած

---

1) Այստեղ պէտք ենք համարում յիշել, որ արիւնը մարմնու մէջ բաշխւում է խողովակների միջոցով, որոնք ասւում են անօթներ. այս անօթները ընդունակութիւն ունին լայնանալու և նեղանալու, որը կախուած է նեարդների գրգիռներից, և այն գործողութիւնը, որով անօթը լայնանում է և նեղանում նեարդների ազդեցութեան տակ, կոչւում է նեարդաշարժութիւն կամ նեարդաշարժական գործողութիւն. իսկ անօթների նեարդերից կախուած խանգարումները կոչւում են նեարդաշարժական խանգարումներ:

շրջանը անցնում է, իսկոյն մարմնու մակերևոյթի վերայ արիւնի հոսանքը արագանում է, և այս լինում է կարճ ժամանակամիջոցում, երբ արիւնի թանձրութիւնը նուազեցնող նոր պայմաններ չեն ծնւում: Այստեղ էլ արիւնի շրջադարձութեան խանգարումները յառաջանում են անօթների նեարդաշարժութեան փոփոխումից: Թէ ինչպէս անօթների նեարդաշարժութեան փոփոխումը կարող է դանդաղացնել կամ արագացնել արիւնի հոսանքը, այդ փորձով գիտէ ամեն ոք, որ ուրախութիւնից հոգու զուարթութիւն, իսկ տխրութիւնից ճնշողութիւն կամ սրտնեղութիւն է զգում, առաջի դէպքում մեր բազկերակի հրոյթը (պուլ'սը) յաճախում է և մեր երեսի գոյնը կարմրում, երկրորդ դէպքում դանդաղում է և երեսի գոյնը սպրդնում՝ կապտում: Խօլերայի սիրտը լայնանում է: Արիւնի մէջ ուրիշ ապացուցած փոփոխութիւններ չկան, բայցի քիչ թէ շատ թանձրութիւնից, որ կախումն ունի ջրային մասերի համապատասխան կորուստից:

Երրորդ երևոյթը, որ փոփոխութեան է ենթարկւում, այդ միզաթորութիւնն է: Ինչպէս վերև նկարագրեցինք՝ առաջի շրջանում մէզը նուազում է, իսկ երկրորդում, երբ հիւանդը լինում է սառած շրջանի մէջ, բոլորովին կապւում է: Որովհետև բոլոր համաճարակումների ժամանակ, բոլոր երկրներում բժշկները նկատել են, որ սառած վիճակը վերջանալուն պէս, երբ դեռ մի կաթիլ ջուր չէ մտցրած մարմնու մէջ, արիւնի ջրային մասերի կորուստը լրացնելու և սրանով թանձրութիւն նուազեցնելու, միզելը վերականգնվում է, ուստի արիւնի թանձրութիւնը. կամ նրա հոսանքի դանդաղումը պատճառ չեն կարող լինել միզակապութեան: Մանաւանդ ներսի գործարաններում՝ արիւնի շարժողութիւնը շարունակւում է, և այն էլ այնքան ուժով, որ ներսի տաքութիւնը բարձրանում է 0, ուստի անհրաժեշտ է ենթադրել, որ ճնշողութիւնը երակներում՝ այնքան փոքր չէ, որ մեզարգելութիւն պատճառէ կան փաստեր, որոնք թոյլ են տալիս մեզ ընդունել թէ մեզարգելութիւնը յառաջ է գալիս նեարդաշարժական խանգարումներից երիկամունքների մէջ: Մանաւանդ՝ եթէ ուշ դարձնենք այն հանգամանքի վերայ, որ միզելու

կարողութիւնը վերականգնում է միանգամից, յանկարծ, երբ մարմնու գոյնը փոխվում է հիւանդը սկսում է թեթևութիւն զգալ։ Այսպէս շուտ կարող է փոխուիլ միայն նեարդային երևոյթը։

Դ·

ԽՕԼԵՐԸ ԻՆՉԻՑ Է ՅԱՌԱՋԱՆՈՒՄ։

Ստորակէտանման բացիլը·

Այժմ՝ երբ գիտենք՝ թէ խօլերը ինչ արտաքին կերպարանք ունի, հարկաւոր է իմանալ նրա էութիւնը։ Այս հարցի վերաբերութեամբ Պաչինին (Ֆլօրենցիայից) առաջինն եղաւ, որ յայտնեց՝ թէ խօլերի բուն պատճառը է մի առանձին յատկութիւն ունեցող բացիլ [1]․ և այսպիսով դրդեց գիտնականներին այս ուղղութեամբ ընթանալ խօլերի վերաբերեալ հարցում։ Պաչինին չկարողացաւ գտնել խօլերի բացիլը։ Այս բացիլի գտնելումը մենք պարտական ենք Բերլինի պրօֆեսսոր Կօխին։ Վերջինս գերմանական կառավարութեան կարգադրութիւնով գնաց Հնդկաստան խօլերը հետազօտելու իւր ծննդավայրում։ Կօխը երկար աշխատութիւններից յետոյ եկաւ այն եզրակացութեան, որ աղիքների արտաթորութիւններում գտաւ մի տեսակ բացիլ որը անուանեց կօմմաբացիլ, այսինքն ստորակէտանման բացիլ· այս բացիլի հաստութիւնը, երկարութիւնը և լայնութիւնը սրա-

---

1) Այժմեան դարում ենթադրում են, որ բոլոր վարակիչ հիւանդութիւնները յառաջանում են մանրակազմ մարմիններից, որոնց միայն մանրադիտակով կարելի է տեսնել, և որոնք՝ զանազան պատկերներ ներկայացնելով՝ կոչվում են վիբրիօններ, բակտիրներ, բացիլներ, սպիրիլներ և այլն։ Պրօֆեսսոր Շտրիւմպելը՝ ենթադրում է, որ նեարդային հիւանդութիւնների մի որոշ մասը իւրեան ծագումով նոյնպէս պարտական է մանրակազմների աշխարհին պատկանող գոյակներին։ Այս մանրակազմների տեսութիւնը զննվում է առանձին գիտութեան մէջ, որ ասւում է բակտերաբանութիւն։

շելը դժուար էր, չնայելով որ Կօխը շատ անգամ կրկին և կըրկին չափել է. բայց համեմատելով Թօքախտի բացիլի հետ նա գտել է, որ խօլերի բացիլը հաւասար է Թօքախտի բացիլի կէսին կամ երկու երրորդին. բայց հաստ է և մի փոքր ծռուած, և այս կորութիւնը մեր ստորակէտի կամ գերմանական կօմմա նշանի պէս է. և այս պատճառով ստորակէտանման բացիլ անուն ստացաւ: Այս բացիլները գտնուած են եղել բացառապէս աղիքների արտաթորութիւններում, աղիքների պատերում և գեղձերում, բայց արիւնի մէջ և ներքին գործարաններում երբէք չեն գտնուել: Սրանից յետոյ Կօխը համոզուել է, որ ստորակէտանման բացիլը խօլեր յառաջացնող մանրակազմն է:

Սակայն գտնուեցան ուսումնականներ և այն էլ հռչակ ունեցողներ, որոնք սկզբում համամիտ չէին Կօխի հետ, յառաջ բերելով այն փաստը՝ թէ ստորակէտի նման բացիլներ կան ուրիշ հիւանդութիւններում: Բայց Կօխը ցոյց տուեց, որ իւր գտած բացիլը իւրեան աճելու եղանակովը զանազանւում է համանման բացիլներից. բայց որ աւելի ապացուցութիւն ունի, այդ պատուաստելն է:

Առաջի պատուաստումը արել է Նիկատին Մարսէլում, յետոյ Ջէկի'ն Իտալիայում: Սրանից յետոյ Կօխը Բերլինի կայսերական առողջապահական խորհրդում ներկայ եղողներին ցոյց տուեց տասն և չորս ճագար, որոնց պատուաստել էր խօլերը: Այս ճագարները պատկերացնում էին խօլերի բոլոր գլխաւոր երևոյթները. այնպէս որ այս վճռական փորձութիւնից յետոյ Կօխի հակառակորդները ստիպուած էին ընդունել Կօխի ստորակէտանման բացիլը իբրև խօլերածին բացիլ: Բացի սրանից այս պատուաստում հաստատեց և խօլերի վարակիչ լինելը. այսինքն վարակող տարրը՝ մտնելով մարդու աղիքներ 9՝ բազմանում է և եթէ այստեղից՝ դուրս գալով՝ մտնում է մի ուրիշ մարդու աղիքներ, բազմանում է և այնտեղ յառաջացնում է նոյն հիւանդութիւնը, ինչ որ ունեցել է առաջի մարդը:

Այստեղ հարկաւոր է ցոյց տալ թէ ինչ պայմաններ նպաստում են այս բացիլի զարգանալուն և արգելք են լինում:

Ստորակէտանման բացիլի զարգանալու և բազմանալու համար հարկաւոր է անպատճառ խոնաւութիւն, խոնաւութեան նուազումը դանդաղեցնում է զարգանալը. խոնաւութեան հետ միասին այն միջոցը, որի մէջ ապրել է այս բացիլը. պէտք է հիմնային լինի, որովհետև աղիքների արտաթորութիւնները, որի մէջ բազմանում է նոյնպէս շատ հիմք ունի։ Ստորակէտանման բացիլը կամ որ՝ և միևնոյն է խոլերային սաղմը 3 ժամ չորացնելուց յետոյ անվնաս է դառնում։ Թթու հեղուկների մէջ բացիլները ոչնչանում են 10 րոպէում. Եփելը կամ հոտելը խանգարում է բացիլների աճելուն։

Ե.

ԻՆՉՊԷՍ Է ՃԱՐԱԿՒՈՒՄ ՄԻ ԵՐԿԻՐ ԿԱՄ ՔԱՂԱՔ. ԻՆՉՊԷՍ Է ՎԱՐԱԿՒՈՒՄ ՄԻ ԱՆՀԱՏ.

Ճանօթանալով խոլերածին բացիլին, մենք իմացանք, որ առանց նրա խոլեր ախտը չէ կարող յառաջանալ։ Բայց ինչպէս է պատահում որ մի ամբողջ երկիր ճարակւում է. և ինչ եղանակով վարակւում է մի առանձին անհատ։

Այժմեան գիտութեան համաձայն՝ մենք կարող ենք ասել, թէ՝ նախ՝ մի երկիր ճարակւելու համար հարկաւոր է, որ այնտեղ բերուած լինի հիւանդութեան սաղմը. երկրորդ՝ այս սաղմը իւր զարգանալու և ապրելու համար այդ տեղում պէտք է ունենայ յարմար պայմաններ. և երրորդ՝ այդտեղ հարկաւոր են բարեյաջող պայմաններ վարակութիւնը տարածելու համար։

Խոլերային սաղմը մի տեղ կարող է բերուած լինել մի մարդու միջոցով, որ ինքը հիւանդ է և արտաթորում է աղիքներից սաղմը պարունակող նիւթեր. կամ մարդ ինքը առողջ է, բայց իւր հետ բերում է այնպիսի իրեղէններ, որոնք ապականուած են վարակմունքով. և կամ առուտուրի ապրանքների միջոցով, որոնց կպած է վարակմունքը։

Սակայն մի երկիր համաճարակելու համար դեռ ևս բաւական,

չէ որ այդտեղ բերուած լինի խօլերային սաղմը, այլ հարկաւոր է, որ այդտեղ նպաստաւոր հանգամանքներ լինին նրա աճելու և տարածելու համար։ Եթէ՝ պատահմամբ՝ խօլերային սաղմը մըտնում է մի անհատի մարսողական գործարանները, կհիւանդանայ միայն այս անհատը. բայց երբէք համաճարակում՝ չի լինիլ. մանաւանդ՝ եթէ ուշ դարձնենք այն բանի վրայ, որ՝ ինչպէս ապացուցել է այս Կօխը՝ նեխելը կամ հոտելը արգելք է լինում ստորակէտանման բոյսերի աճելուն։ Ինչ որ նպաստում է սրա զարգանալուն, այդ հողի ծակոտութիւնն է և ստորերկրեայ ջրի մակերեւոյթի բարձրութիւնը, որի նուազ կամ աւելի լինելուց կախուած է մանրակենդանիների (միկրօբների) աճելութիւնը։ Այսպէս է մեկնում՝ գանեայ՝ հռչակաւոր Պետտեն կօֆերը, որի հետ համաձայն են միւս ուսումնականները։

Իհարկէ հողը ինքը պէտք է շօրային բնոյթ ունենայ։ Ուրիշ տեղական պայմաններ անյայտ են։ Պատմութիւնից այսքան գիտենք միայն, որ զանազան համաճարակումների ժամանակ եղել են տեղեր, որոնք չեն ճարակուել. ինչպէս այս հաստատուած է Ֆրանսիայի Լիօն քաղաքի համար, և Իտալիայում Լիգուրիա գաւառի Շիավարիի համար։ Բոլոր համաճարակումների ժամանակ խօլերը տարածւում էր Շիավարիի շուրջը, բայց իւր մէջը չէր մտնում։ Եթէ պատահել է խօլերով հիւանդացողներին գալ այդտեղ, նրանք մնացել են միայնակ հիւանդներ, և ուրիշները չեն վարակուել։ Նոյնը հինաւուրց ծերունիները վկայում են և մեր Էջմիածնի համար։

Խօլերային սաղմը՝ երբ որ աճեց և բազմացաւ մի տեղում, դեռ ևս համաճարակումն չի պատճառիլ, մի երկրում ախտ տարածուելու համար հարկաւոր է նաև նպաստաւոր ճանապարհներ։ Մինչև այժմ իբրև յարմար ճանապարհներ ընդունել են օդը և ջուրը, բայց վերջին ժամանակներս Կօխը հաստատեց, որ օդը չէ կարող տարածող միջոց լինել։ Եթէ օդով այդ ախտը տեղափոխուի էլ, այն էլ մի փոքր տարածութեան վերայ կլինի։

Ընդհակառակը ջուրը խօլեր տարածելու ամենալաւ ճանապարհն է։ Ինչպէս այս հաստատում է վերջին ժամանակները խօ-

լերի տարածելը Ջենովայում։ Հետազօտութիւնը ցոյց տուեց, որ խօլերի սաղմը ընկել էր ջրաբաշխ խողովակների մէջ, որոնցից բնակիչները ջուր խմելով վարակուել են։

Կօխը իւր Հնդկաստանում եղած ժամանակ մի կեղտակալած լճակի մէջ գտել էր ստորակէտանման բացիլ։ Այս լճակի ափերում կենում էին հնդիկներ, որոնք օգտւում էին այդ ջրից իւրեանց բոլոր կարիքների համար. այդ ժամանակ էլ նրանք հիւանդնում էին. երբ խօլերը նուազում էր այնտեղ, նուազում էր և լճակի ջրի մէջ խօլերի բացիլը։ Կօխը ասում է թէ այս փաստի վերայ պէտք է նայել իբրև մի մեծ փորձի, որ բնութիւնը արել է մարդկանց գլխին։ Այս և սրա նման փաստերից յետոյ հաստատապէս կարող ենք ընդունել, որ ջուրը ամենալաւ միջոցն է խօլեր տարածելու համար։

ՍԱԿԱՅՆ ԻՆՉՊԷՍ Է ՎԱՐԱԿՒՈՒՄ ՄԱՐԴՍ.

Ջուրը և ամենայն ինչ, որ մտցնում ենք մեր մարսողական գործարանները, բաց առնելով թթու հեղուկները, որոնց մէջ խօլերի բացիլը ընդունակ չէ ապրելու, կարող են միշտ վարակել մեզ, եթէ ինքը պարունակում է իւր մէջ վարականիւթ. այս դէպքում մարդուն ապականում է այն՝ ինչ որ բերանով ներս է մտնում և ոչ այն՝ ինչ որ դուրս է գալիս բերանից։

Որպէս զի վարականիւթը իւր մահառիթ ազդեցութիւնը ունենայ, պէտք է որ նա մտցնուի անպատճառ բարակ աղիքների և ոչ ստամոքսը, որովհետև, ինչպէս Կօխը ապացուցել է, ստամոքսի հիւթը, իբրև թթու հեղուկ, սպանում է խօլերի բացիլներին. եթէ միայն ստամոքսը առողջ է և արտադրում է կանոնաւոր հիւթ։ Այս դէպքում խօլերի բացիլը մարսւում է։

Ուրեմն եթէ պատահեց, որ թէ խմիչքների և թէ ուտելեղէնի հետ խօլերի վարականիւթը մտնի ստամոքսը, նա այն ժամանակ միայն կարող է անց կենայ աղիքները, երբ ստամոքսի հիւթը կորցնելով իւր թթուութիւնը դարձել է ջրային կամ չեզոք։ Այս է պատճառը, որ եթէ առողջ մարդը հիւանդանում է խօլե-

բոլ, նա՝ անշուշտ՝ հիւանդանալուց առաջ պաշտպանողութեան դէմ անկարգութիւն է արել։ Կարճ կարելով խօսքը՝ առողջ ստամոքս ունեցող մարդը երբէք չէ կարող հիւանդանալ խոլերով։ Եթէ այս կէտի վերայ ուշ դարձնենք, շատ աղէտներից հեռու կըլինենք։

Նախընթաց դատողութիւնների հիման վրայ՝ մենք կարող ենք ասել թէ՝ եթէ մէկը ծօփէնայ յետով կամ մորֆինով կոչէ խօլէրով հիւանդին, նա փրկած չէ մահւանից և չէ հիւանդանալ խօլէրով։ Այս կէտը արժանի է մեծ ուշադրութեան։

Ի հարկէ հետաքրքիր է իմանալ թէ՝ ինչից են յառաջանում խոլերի զանազան երևոյթները կամ ինչու ամեն խոլերով հիւանդացող միևնոյն պատկերը չէ ներկայացնում։

Որովհետև մենք վերևը ասացինք թէ՝ ստորակէտանման բացիլը գտնըւում է միայն աղիքների արտաթորութիւններում, աղիքների պատերում և գեղձերում, իսկ միւս գործարաններում և արիւնի մէջ չեն լինում, կարելի չէ թոյլ տալ որ՝ մի կէտի վերայ ազդելով՝ խոլերի բացիլները յառաջացնէին ամբողջ մարմնու մէջ այնպիսի փոփոխութիւններ ինչ որ տեսանք վերևի նկարագրութիւնից։ Գիտութիւնը ցոյց է տալիս, որ այս բացիլները մի ինչ որ նիւթ են արտադրում աղիքներում, որը այստեղից տարածւում է մարմնու մէջ և զանազան գործարաններում. այնպէս որ բացիլների այս արտադրած նիւթը կարելի է այդ գործարաններից ստանալ և, սրսկելով կաշու տակ, յառաջացնել խոլերի երևոյթները։ Այսպէս էլ արել են Պուշէ և Գօտիէ բժիշկները։ Սրանցից առաջինը խոլերոտի արտաթորութիւններից, իսկ երկրորդը ներքին գործարաններից հանել են մի նիւթ, որը սրսկելով կենդանիների կաշու տակ յառաջ են բերել խոլերի երևոյթները։ Այսպիսի թոյները, որոնք պատրաստւում են մարդու ներսում մանրակազմների ազդեցութեան տակ կոչւում են պտօմայիններ. իսկ խոլեր յառաջացնող պտօմայինը կոչւում է խոլերի պտօմային։ Այս տեսութիւնը ընդունելով կարելի է հասկանալ թէ՝ ինչու խոլերը մի դէպքում կարճ է կտրում, միւս դէպքում դանդաղ է ընթանում, մի դէպքում թեթև, միւս դէպքում դժուար ու ծանր է լինում։ Մենք ասացինք, որ աղիքներում ստորակէտանման բացիլ-բնւորները պատրաստում են խոլերի պտօմային, որը կարող է շուտ և շատ պատրաստւել. կամ երկար ժամանակում շատ պատրաստւել կամ քիչ պատրաստւել։ Եւ այս նրա համար, որ ինչպէս վերևը յիշեցինք հոտելը կամ նեխելը արգելք է լինում բացիլների զարգանալուն։ Ուստի և խոլերի պտօմայինի քանա-

կութիւնը կախուած կլինի աղիքներում եղած նեխութեան աստիճանի շատ ու քիչութիւնից։ Իսկ խօլերի պտօմայինի շատ ու քիչութեան հետ կապուած է հիւանդութեան երևոյթների թեթև ու ծանրութիւնը։

Ջ.

ՆԱԽԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Վերևի բացատրութիւնից հասկանալի է՝ խօլերի հիւանդութեան դժուար բժշկւելը. շատ անգամ էլ այս ախտը ժամանակ չէ տալիս բժշկւելու։ Ուստի հանգամանքները ստիպում են մեզ դիմել այնպիսի միջոցների, որոնցով կարելի է հիւանդանալու առաջը առնել։ Ո՞րոնք են այս միջոցները։ Ինչպէս վերևը ասացինք՝ այս ախտը բերւում է մեզ մօտ գլխաւորապէս Հնդկաստանից կամ մեզ սահմանակից երկրներից, որոնք նոյնպէս Հնդկաստանից են վարակւում։ Ուրեմն երբ մեր սահմանակից երկրներում խօլերի համաճարակումն է լինում, այն ժամանակ պէտք է զգուշութիւն գործ դրւի, որ մեզ մօտ չբերւի այդ ախտը։ Այդ զգուշութիւնը կայանում է նրանում, որ սահմանագլխներում կարգում են այսպէս ասած՝ կարանտիններ, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր քառասունքը։ Ինչպէս ծննդկան կնոջ արգելւում է 40 օր դուրս գալ տանից, որ մի հիւանդութիւն չյառաջանայ, այնպէս էլ՝ մեր սահմանակից երկրների մէջ համաճարակում եղած ժամանակ՝ արգելք է դրւում և պէտք է դրւի եկողների վերայ, թէ առողջ և թէ հիւանդ լինին նրանք։ Առողջներին պահում են այնքան ժամանակ, որքան հարկաւոր է հիւանդութիւնը ծածուկ վիճակից յայտնի դառնալու. այսինքն 3—4 օր, իսկ հիւանդներին պահում են մինչև իրանց առողջանալը։ Երբ հիւանդը առողջանում է, իրան պատկանած բոլոր իրեղէնները պէտք է մաքրւի, ենթարկելով այնպիսի նիւթերի ազդեցութեան, որոնք ոչնչացնում են վարակիչ յատկութիւնը. այս նիւթերը կոչւում են վարակաջինջ (դէզինֆէկցիական) նիւթեր, որոնց մասին ներքև կխօսւի։ Երբ խօլերը սպրդելով մտնում է մեր երկիրը, այն ժամանակ պէտք է ուշ դարձնել այնտեղի վերայ, ուր նա երևացել է։ Հիւանդներին հար-

կարող է խնամել իւր հիւանդացած տեղում և նրա արտաթո-րութիւնները և շորերը ինչպէս և սպիտակեղէնը վարակաջնջել այսինքն ոչնչացնել վարակիչ հիւանդութիւնը նրանց մէջ: Հիւան-դի կղկղանքը և փսխածը պէտք է անպատճառ ընդունել մի ա-ռանձին ամանում՝ որի մէջ ածած պէտք է լինի նախապէս վա-րակաջնջիչ նիւթեր: Հիւանդի խնամատարները զգոյշ պէտք է կե-նան պահեցողութեան մէջ. հիւանդի սենեակում՝ ոչ պէտք է ու-տեն և ոչ խմեն: Հիւանդի հետ՝ բացի նրա խնամատարներից ոչ ոք յարաբերութիւն պէտք չէ ունենայ: Առհասարակ ամենքը, ուր խօլերը երևացել է, ամենականոնաւոր կեանք պէտք է վարեն: Ով թոյլ ստամոքս ունի, նա ենթարկւում է վարակւելու վտանգի. ուստի այդպիսիները պէտք է մնեն բժշկի հսկողութեան տակ՝ քանի որ համաճարակումը տևում է: Փտած և նեխած մրգեղէ-նից, կանաչեղէնից և այլ անմարսական նիւթերից պէտք է հեռու կենալ:

Հիւանդի բնակարանը ինչպէս և անկողնի պարագաները պէտք է վարակաջնջել, թէ հիւանդանալուց առաջ և թէ յետոյ: Հի-ւանդի սենեակում բացի իւր անկողնից և անհրաժեշտ կահկա-րասիքից աւելորդ բան չպէտք է լինի:

Վերև յիշեցինք վարակաջնջելու մասին, բայց ոչինչ չասացինք թէ ինչ նիւթեր և ինչպէս պէտք է գործադրւի: Ուստի այստեղ դնում ենք համառօտ տեղեկութիւն վարակաջնջիչ նիւթերի և վա-րակաջնջելու վերաբերութեամբ: Գլխաւոր վարակաջնջիչ նիւթերը հետևեալները են՝ աղային թթւայթ (соляная кислота), քացախի թթւայթ (уксусная кислота), ծծմբային թթւայթ (сѣрная кисло-та), սուլէյմանի (сублиматъ), կարբոլի թթւայթ (карболовая кис-лота), չոր խլորայինկ (сухой хлористый цинкъ), պղնձի արջասպ (мѣдный купоросъ) և երկաթի արջասպ (желѣзный купоросъ): Այս նիւթերից պատրաստւում են այնպիսի խառնուրդ, որ երկար ժամանակ թթու յատկութիւն ունենայ, և այդ խառնուրդով վա-րակաջնջում են, որովհետև խօլերի բացիլները ընդունակ չեն թթու հեղուկների մէջ ապրելու: Բացի այս նիւթերից կայ և մի այլ միջոց, որ աւելի մատչելի է. այդ եռացնելը և տաք գոլորշին

է, որին ոչ մի տեսակ բացիլլ չէ դիմանում: Համաճարակումի ժամանակ պէտք է աշխատել ոչնչացնել վարականիւթը ամեն տեղ, որտեղ կասկածելի է և որտեղից կարելի է վարակուել:

1. *Պէտք է վարակաջնջել կերակուրը. դրա համար պաշարեղէնը պէտք է եռման ջրով լուանալ և երկար ժամանակ տապակել կամ եփել:*

2. *Պէտք է վարակաջնջել ջուրը, որը պէտք է նախապէս եռացնել և յետոյ գործածել: Քամելը այնպէս, ինչպէս մենք ենք քամում, չէ կարող օգնել:*

3. *Պէտք է օդը վարակաջնջել. այս նպատակի համար հարկաւոր է հողմահարել սենեակը, բանալով լուսամուտները, վառելով բուխարիները: Հիւանդի սենեակում աւելի նպատակայարմար է է բուխարի քան երկաթի կամ պատի հնոցները:*

4. *Պէտք է վարակաջնջել արտաքնոցները և լուացաջրերը: Դրա համար հարկաւոր է բոլոր ապականութիւնները դուրս տանել բնակութիւնից հեռու տեղ, խառնել ջրախառն ծծմբային թթւոյթի կամ անմաքուր կարբոլեան թթւոյթի հետ այնպէս որ անհետանայ հոտածութիւնը: Կարելի է խառնել և պղնձի արջասպի հետ արջասպի 4 մասը խառնել ապականութեան 100 մասի հետ (և մի մասը՝ լուացաջրի 1000 մասի հետ):*

5. *Պէտք է վարակաջնջել նոր գոյացած կղկղանքը, որը հարկաւոր է խառնել ծծմբային կամ աղային թթւոյթների ջրախառնուրդի (մի մաս թթւոյթ 2 մաս ջուր) հետ և թողնել ազդելու 6-ից մինչև 12 ժամ կամ կարբոլեան թթւոյթի ջրախառնուրդի (5 մաս թթւոյթ 100 մաս ջուր) և թողնել ազդելու 2-ից մինչև 24 ժամ: Նոյնպէս կարելի է խառնել պղնձարջասպի և երկաթի արջասպի ջրախառնուրդի հետ (առաջինից մէկ, երկրորդից տասը մաս՝ 100 ջրին) թողնելով 24 ժամ ազդեցութեան տակ:*

6. *Այն բնակարանը որտեղ եղել է խոլերով հիւանդը, պէտք է վարակաջնջել. Նրա պատերին առատօրէն սրսկելով կարբոլի ջրախառնուրդ (100-ին 5 մաս): Ապականուած շորերը և անկողինը եթէ չնչին գին ունին պէտք է այրել, իսկ սպիտակեղէնը եփտալ մոխրաջրով և լուանալ հասարակ եռման ջրով: Որտեղ ա-*

պակասութիւնը կամ թաց կլինի, այնտեղ հարկաւոր է նոյնպէս լուանալ կարբօլի ջրախառնուրդով:

Դ. Խմելու ջուրը, ջրաբաշխ խողովակները, քանքանները պէտք է հեռու պահել վարակուելուց, հսկողութեան տակ դնելով նրանց:

Ե.

ՀԻՒԱՆԴԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՍՑՆԵԼԸ ՄԻՆՉԵՒ ԲԺՇԿԻ ԳԱԼԸ.

Նախընթաց փորձերը ցոյց են տուել թէ՝ ինչ միջոցներ օգնում են խօլերի երեւյթները թեթեւացնելու:

Նախ՝ երբ սկսում է փորլուծութիւնը հարկաւոր է փորի վերայ դնել տաքացրած աղ, մոխիր կամ մանանեխ. յետոյ պէտք է խմացնել թէյ և սուրջ կօնեակով կամ չամչի արաղով (եթէ կայ): Դեղերից եթէ ձեռքի տակ լինի, տալ խնօզեմցեվի կամ բոտկինի կաթիլներ 20-ական կաթիլ ամեն 1—2 ժամ: Փսխելուն կարելի է օգնել սառուցի կտորներ կուլ տալովը: Ծարաւը կտրելու համար հարկաւոր է տալ սառուցյ, լաւ հին գինի և եփ տուած ջուր սառցրած, որը պէտք է կում կում խմել: Երբ որ ջղձգումներ է լինում մարմինը պէտք է տրորել քեաֆուրի կամ մանանեխի սպիրտով. ոտերը տաքացնել բութէլների մէջ ածած տաք ջրով. նոյնպէս տաք ջրի մէջ նստացնել: Իսկ ուժը պահպանելու համար հարկաւոր է տալ հին գինի, արաղ. և եթէ լինի ձեռքի տակ վալերեանի և հօֆմանի կաթիլներ 20-ական կաթիլ ամեն 2 ժամ:

(Յօդուածը կազմուած է գլխաւորապէս պրօֆեսսոր Մարիլեանօվի դասախօսութիւնով):

Ծանօթութիւն: Յօդուածը շարուած էր, երբ լուր տարածուեցաւ թէ՝ հրամայուած է մրգեղէն չվաճառել և մինչև անգամ բոստանները քանդել: Այս պատճառով անհրաժեշտ է նկատել, որ թթու մրգեղէնը ուղղակի խօլերի բացիլլներին սպանում է և արգելք է լինում հիւանդութեան տարածուելուն, ուրիշ թարմ մրգեղէնները ինչպէս և բոստանների պտուղները երբէք մինչև այժմ խօլեր չեն յառաջացրել. Ուստի արգելք դնել այդ-

Նիւթերի (երկիրը այդ է արտադրում՝) առուտուրին ասել է թէ՝ զրկել մեր ժողովրդին ապրուստի միջոցից, որ հակառակ է առողջապահութեան գլխաւոր կանոնին. այն է առողջ լինելու համար հարկաւոր է կանոնաւոր սնունդ։ Գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել այն հանգամանքի վերայ, որ ջրերը չվարակուեն թէ խմելու ջուրը, թէ գետերի, եւ թէ առուների ջրերը, արգելելով որ ոչ մի կասկածելի բան չլցնեն այդ ջրերում, ինչպէս որ վարակւաջնչ-ւած չէ նախապէս, որովհետեւ հիւանդութեան տարածողը ջուրն է։

Բժ. Մ. ՋԱՐԳԱՐԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 7 ին եկեղեցական փառաւոր հանդէսով կատարուեց Ս. Էջմիածնի տօնը. կիւրակէ առաւօտեան նախ քան Ս. պատարագը, Տաճարի զանգակատան առաջ, սալայատակի վերայ բազմաթիւ ժողովրդեան ներկայութեամբ՝ միաբանութիւնը կատարեց սովորական մաղթանքը: Ժամ 10 ին սկսուեցաւ հանդիսաւոր պատարագ, պատարագիչն էր Ամենապատիւ Տէր Տեղակալը: Ճաշի հրաւիրուած էին բազմաթիւ հիւրեր, ամրան և ձմրան սեղանատունները լիքն էին: Ճաշի ժամանակ Ամենապատիւ Տէր Տեղակալը առաջարկեց Թագաւոր կայսեր, Ս. Էջմիածնի հաստատութեան և Նորընտիր Հայրապետի կենաց բաժակներ, յանկայս երգեցին «Էջմիածին ի հօրէ» և «Աղբիւր կենաց» շարականները: Առաջարկուեցան զանազան կենաց բաժակներ, ուրախութիւնը և ոգևորութիւնը ընդհանուր էր օրուան հանդիսի վերաբերութեամբ: Երեկոյեան վանքի գաւթում ճրագալոյց և հրավառութիւն կար. Ճեմարանի աշակերտները իւրեանց ազգային ներդաշնակ երգերով զուարճութիւն և մեծ բաւականութիւն պատճառեցին Վաղարշապատի հասարակութեան և մօտիկ տեղերից եկածներին: Հրավառութիւնը տևեց մինչև ժամի 11 *ը և բազմութիւնը ցրուեց:*

—

Այս տարի Մայր Աթոռի հոգևոր Ճեմարանը աւարտեցին 11 *հոգի ուսանողներ. Աղէքսանդր Զուբարեան Օդեսացի, Բագարատ Սերովբեան Աղէքսանդրապօլցի, Բագարատ Վարդազարեան Վլադիկաւկազցի, Երեմիա Ապրելեան Դուշէտցի, Զուրաբ Զամբազեան Կարսեցի, Մատթէոս Փիրքճեան Ախալցխացի, Մար-*

տրոս Սիւտճեան Ախալցխացի, Յակոբ Խաչվանքեան Ալէքսանդրապօլցի, Յարութիւն Մայիլեան Դիլիջանցի, Ռափայէլ Աբրահամեան Նրգաւիթնցի, Վաղարշակ Գասպարեան Աշտարակեցի:

—

Յունիսի 14-ին Մայր Աթոռի ճեմարանի ընթացաւարտ ուսանողները Ս. պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարեցին ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ. կաթուղիկոսի գերեզմանի վերայ ի ներկայութեան Էջմիածնի միաբանութեան, ճեմարանի ուսուցչաց, աշակերտների և բազմաթիւ հանդիսականների. ուսանողները իրենց բարերարի գերեզմանի վերայ թարմ ծաղիկներից պատրաստած մի պսակ դրին: Հոգեհանգստից յետոյ նորաւարտ ուսանող Վաղարշակ Գասպարեանց կարդաց հանգուցեալ Գէորգ Դ. կաթուղիկոսի յիշատակին նուիրած հետևեալ ճառը:

—

Կերպարանափոխ արէք դաստիարակութիւնը եւ
դուք կփոխէք երկրի դիրքը·

Լէյբնից:

Քանի որ այս հանդէսը կատարւում է ի յիշատակ այնպիսի մարդու, որ մեծ դեր է խաղացել մեր ժողովրդի կրթութեան գործի մէջ, այդ առթիւ մեր ասելիք խօսքերին չէինք կարող աւելի յաջող բնաբան ընտրել, քան վերոյիշեալ անուանի փիլիսոփայի խօսքերը. որովհետև դրանով աւելի զօրեղ կերպով արտայայտւում է այն միտքը թէ ինչ մեծ ոյժ է դաստիարակութիւնը մարդկութեան և աշխարհի առաջադիմութեան գործում: Մենք աշխարհի էլ յիշեցինք, որովհետև դրանով «դուք կը փոխէք երկրի դիրքը»:

Անթիւ անհամար դարերի ընթացքում մարդկային միտքը հետզհետէ առաջ գնալով՝ եկաւ նոյն ուղիղ և անհերքելի եզրակացութեան, թէ առաջադիմութեան նպատակն է՝ դնել անհատին այնպիսի պայմանների մէջ, ուր նա կարողանար ազատ կերպով զարգացնել իր հոգու մտաւոր և բարոյական կարողու-

թիւնները, որի մէջ է կայանում իսկապէս մարդու կոչման էութիւնը: Այնուհետեւ ըստ երեւոյթին որոշւում էր ազգերի կեանքի ուղին, անսխալ և նպատակայարմար ընթացքը, ըստ երեւոյթին բարձւում էին մարդու հոգու ու մտքի անարգել կանոնաւոր զարգացմանն անհամապատասխան կուլտուրայի նախնական վայրենի ձեւերի գոյութիւնը, այն ձեւերի՝ որոնց մէջ շղթայուած դեռ այսօր էլ մարդկութեան մի մեծ մասը քաշ է տալիս մի կերպ իր ողորմելի կեանքը: Քաղաքակրթութեան զօրութիւնը, չնայելով, որ այնքան ճոխ օրինակներով է արտայայտւում վաղ ժամանակից՝ մանաւանդ այժմ՝ բայց և այնպէս դեռ բազմաթիւ ազգեր զուրկ են նրա նշանակութիւնը հասկանալուց անգամ, և դրա պատճառով այնպիսի կենսական պայմանների և ընկերական կազմակերպութեան են ենթակայ, որոնց մէջ մարդու վսեմ և բարձր կողմերն անկարող են աճել, որոնց մէջ մարդկային անձնաւորութեան և պատուի գաղափար իր վսեմ նշանակութեամբ գոյութիւն չունի յարաբերութիւնների մէջ, և անձնաւորութիւնը ծնուելով ճնշող հանգամանքներում՝ անց է կացնում իր կեանքը՝ լոկ գոյութեան խնդիրներին նուիրած իր բոլոր ուժերը: Հեռու չգնանք. ձեզ օրինակ՝ հենց մեր Ասիայի անքաղաքակիրթ ազգերը, որոնց կուլտուրան, հասկացողութիւնն ու համոզմունքը ստեղծել են մարդկային բնութեան հակառակ այնպիսի պայմաններ, որոնց մէջ չի կարող ներկայանալ մի դրութիւն, մի կեանք, ուր աճէին ազնուանային մարդուն բնութիւնից պարգեւած բարձր ընդունակութիւնները, ուր մարդ մեծանար իբրեւ մարդ, ազատ, անկախ արտաքին ճնշող հանգամանքներից, ուր նա կարողանար փայլել իր հոգու բոլոր հրաշալի գեղեցկութիւններով և օրինաւոր իրաւունքների վրայ հիմնած կեանքի արմատները հաստատէր: Այդ ազգերը՝ զարգացման դեռ շատ ստոր աստիճանի վրայ գտնուելով՝ զուրկ են քաղաքակրթութեան բարիքներից: Դրանք անբնական արհեստական հնարներով ինքնակամ սահման են դրել իրենց մտքի առաջընթացութեան. այդ այն դատապարտելի անշարժութեան կարծիս մշտական փաղխն է, որի մէջ գտնում ենք արեւելեան ազգերին:

Մարդկութեան մի փոքրիկ մասնիկը՝ մենք հայերս արդէն խորտակած պէտք է համարենք մեր զարգացման առաջն առնող չինական պարիսպը: Մենք որոշ չափով ծանօթացել ենք քաղաքակրթութեան էութեան վերանորոգիչ ոգու հետ. մենք, գիտենք, որ կան ապրուստի և գոյութեան աւելի լաւ պայմաններ, մենք գիտենք. որ կան միջոցներ, որոնցով հնարաւոր է դառնում՝ բարեփոխել կեանքը, ծածկել նրա բացասական կողմերը, մենք գիտենք նոյնպէս, որ այդ բոլորը ձեռք է բերւում՝ կրթութեամբ, լուսաւորութեամբ: Այսօր ամեն մի հայ ձեզ իբրև ճշմարտութիւն կասէ՝ թէ հարկաւոր է կրթել մատաղ սերունդը, հարկաւոր է մտածել ապագայում՝ ընտանիք և հասարակութիւն կազմող արական և իգական անդամների վրայ. մեր ժողովուրդը համոզուած է այս տարրական ճշմարտութեան մէջ: Տուէք նրան պատրաստուած առաջնորդներ, բարելաւեցէք նրա ուսումնարաններն այնպէս, որ նրանք կարողանան աւելի մատչելի և լայն ծաւալով մատակարարել գիտութեան գոնէ բոլոր էական տարրերը, որ նրանք անմիջապէս դրական կերպով ազդեն կեանքի վրայ, որով մի կողմից ժողովուրդը կարողանար ճիշտ հասկացողութիւն ունենալ իրեն շրջապատող պայմանների մասին, միւս կողմից կարողանար այդ բնական ուժերը ծառայեցնել իւր — մարդկային նպատակին: Ուսումնարանը, կրթութիւնը, մի անհրաժեշտ կարիք է դարձել մեր ժողովրդի՝ եթէ ոչ ամբողջութեան՝ անշուշտ մի մեծ մասի համար. նա գիտէ, որ առանց լուսաւորութեան՝ չէ կարող մարդավայել գոյութիւն ունենալ:

Ուսումնարանը կրթական այլ հաստատութիւնների շարքում լուսաւորութեան տարածման ամենանշանաւոր գործօնն է. նրա նպատակն է բարձրացնել անհատի ինքնաճանաչութեան ոգին, դնել նրան այն դիրքի վրայ, որ ինքը բնութիւնն է սահմանել, այսինքն՝ տալ անհատի հոգու և մտքի ընթացքին այնպիսի ուղղութիւն, որով նա իր ուժերով կարողանայ իշխել բնութեան վրայ և ինքնուրոյն կերպով զարգանալ: Ուսումնարանի նպատակն է բարոյապէս և մտաւորապէս վերանորոգել անհատին, մաքրել նրա հոգին սնոտի և կեղտոտ տարրերից, ազատել նրան

սուտ, սխալ և վայրենի հայեացքներից, որոնք թէ իրեն՝ անհատին են վնասում և թէ իր նմաններին: Ուսումնարանն ուղիղ և նպատակայարմար կենցաղավարութեանը խանգարող այդ վնասակար կարծիքներն ու ստութիւնները կորզելով անհատի հոգուց, ազնուացնում է նրա սիրտը, պարզում պայծառացնում նրա ամբողջ բարոյական աշխարհը, դնում է նրա հոգու և մտքի մէջ ամենաթարմ, առողջ և առաջադէմ սկզբունքներ և հայեացքներ, որ երկար դարերի ընթացքում մշակել է մարդկութեան ամենաընտիր և ամենալուսամիտ մասը, այս ճշմարտութիւն պէտք է տիրող լինի մեր համոզմունքների մէջ և ղեկավար մեր գործունէութեան: Մի խօսքով ուսումնարանը մատնացոյց է անում այն պայմաններն ու միջոցները, որոնք ապահովեցնում են մարդու հոգեկան և նիւթական առաջադիմութիւնները:

Հասկանալի է, ուրեմն. այն հիմնարկութեան, այն ուսումնարանի մեծ նշանակութիւնը, որն ահա թողնելու ենք, հասկանալի է, թէ որքան երախտապարտ ենք դէպի այն նշանաւոր մարդու անմոռանալի յիշատակը, որի շիրմի շուրջը կանգնել էք դուք, այն մարդու՝ որ հայ ժողովրդին ճեմարան տուեց: Նա ամենալաւ կերպով ըմբռնել էր կրթութեան մեծ և դաստիարակիչ նշանակութիւնը ժողովրդի համար և բուռն կերպով ձեռք զարկեց նրա տարածման՝ օգտուելով ժամանակի բոլոր հանգամանքներից: Նրա այդ տեսակ ուղղութեան գլուխ պէտք է համարել անշուշտ ճեմարանը, որը վերջ ի վերջոյ անկասկած դառնալու է Հայոց ուսումնարանների համար բարձրագոյն և օրինակելի կրթարան, որի մէջ բազմաթիւ հայ երեխաներ և երիտասարդներ գիտութեամբ լուսաւորուած՝ ազգի և եկեղեցու համար արժանաւոր գործիչներ պէտք է դառնան: Հիմնադիրը դրեց հիմնարկութեան հիմքը և կեանք տուեց նրան. հետորդներին մնում էր և մնում է շարունակել նրա գործը, հասցնելով ճեմարանն այնպիսի բարձրութեան, որ նա կարողանայ գոհացում տալ մեր կեանքի իսկական նուիրական և կենսական նշանակութիւն ունեցող պահանջներին:

Եթէ նայենք ճեմարանի վրայ այն տեսակէտից, որ վերև՝ ուսումնարանի նպատակի մասին խօսելիս՝ առաջ բերուեց, եթէ աչքի առաջ ունենանք ճեմարանի հիմնադրի նպատակը — տալ հայ ժողովրդին և կրթութիւն և կրթութեան տարածողներ — հասկանալի կլինի Գէորգ Դ. կաթուղիկոսի մեծ արժանաւորութիւնը: Մեզանից իւրաքանչիւրը լինի թէ հոգևորական, թէ ուսուցիչ, թէ հասարակութեան մէջ գործող, թէ սոսկ քաղաքացի, պէտք է նոյն լուսաւորութեան նպատակին ծառայի: Մեր ապագայ գործունէութեան բովանդակ ծաւալն առնելով՝ մեր նպատակը պէտք է լինի՝ որոշ չափով նպաստել մեր ժողովրդի բարոյական և նիւթական առաջադիմութեան: Փոյթ չէ՝ թէ մենք թուով շատ սահմանափակենք. առէք մի քարի կտոր և ձգեցէք ջրի մէջ, փոքրիկ ալիքից նորը և նորն առաջանալով՝ շրջաններն աւելի և աւելի լայնանում՝ ընդարձակւում են և բռնում ջրի հարթ խաղաղ մակերևոյթը. ահագին յորդահոս գետերը և ամեն բան տակն ու վրայ անող հեղեղներն էլ փոքրիկ կաթիլներից են կազմւում:

Ջերմ, երախտապարտ և գոհ սրտով համբուրեցէք այդ շիրիմը, դրա տակ է թաղուած այն ուսումնասէր հովուապետը, որ ծնունդ տուեց մեր ճեմարանին:

Եւդոկեցի բարեպաշտուհի Մայրապետ Թագուհի Պէօրկեան ի նպաստ շինութեան Տաճարին Մայր Աթոռոյ նուիրեց Տասն օսմանեան լիրա (85 ր.):

*
* *

Պարոնայք՝ Կարապետ Տէր-Ազարեան Կարնեցի և Յովհաննէս Սարգսեան Աստրախանցի յօգուտ շինութեան Միաբանից սենեկաց նուիրեցին երկու հարիւր եօթանասուն (270 ր.) ռուբլի:

*
* *

«Արարատի» այս համարի մէջ դնում ենք Արմաւիրի նոր գտնուած բևեռագիր արձանագրութիւնը, որի մասին Մայիսի համարում բարեշնորհ Միաբանը արել էր իւր նկատողութիւնը: Արձանագրութիւնը հէնց գտնուած օրից փոխադրուած է Էջմիածին և այժմ գտնւում է ճեմարանում:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ·

Մայիս 1· Երևանի թեմական փոխանորդ Գեր· Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանցի յարաբերութեան հիման վերայ՝ հրամայում է նորան, նորընծայ Խորէն քահանայ Ստամբոլցեանցին Մայիսին վերջին ուղարկել անշուշտ Գարս քաղաք՝ հովուելու իւր ժողովուրդը:

—

Մայիսի 8· Ս· Էջմիածնի Սինօդը Ղարաբաղի Հայոց կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ, հրամայում է նոյն թեմի առաջնորդ Գեր· Կարապետ եպիսկոպոս Այվազեանցին, վերածելու յաստիճան քահանայութեան Նիժ գիւղացի Վարդան Փաշեանցին և Դանիէլ Ճատտնեանցին նոյն գիւղի վերին և միջին թաղերի ժողովրդեան հովուելու, իսկ ձեռնադրութեան վկայականները մատուցանելու Սինօդին հաստատութեան համար:

—

Մայիսի 8· Տփխիսի հայոց կոնսիստորիայն անցեալ տարուայ Դեկտ· 13-ից 4330 համար իւր յարաբերութեամբ մատուցանելով Սինօդին Հաջիշէն գիւղի հայոց եկեղեցու վերանորոգութեան գործերը, խնդրում է Սինօդի անօրէնութիւնը: Գործերից երևում է, որ Տփխիսի կոնսիստորիայն բագուեցի Սիմէօն Արղումանեանցին թոյլ է տուել վերան·որոգելու Հաջիշէն գիւղի եկեղեցին, իսկ Ելիսաւէտապօլի Նահանգապետը արգելել է վերանորոգութիւնը, յօժարութիւն յայտնելով՝ յատկացնել ուրիշ տեղ, եթէ Արղումանեանցը ցանկանայ իւր ծախքով Հաջիշէն գիւղում

շինել եկեղեցի։ Հրամայեցին։ Որովհետև Ելիսաւէտապօլի Նահան-գապետը դժուարանում է թոյլ տալ Հաջիշէն գիւղի եկեղեցու վերանորոգութիւնը· ուստի դարձնելով գործը, գրել հրաման Տըփ-խիսի Հայոց կոնսիստորիային, պատուէր տալ Ելիսաւէտապօլի հոգ· կառավարութեան մաքուր դրութեան պահելու Հաջիշէնի աւերակ եկեղեցին և նորա շուրջը եղած գերեզմանները իբրև նուիրական սրբավայր, իսկ այն հայազգիք, որոնք ամառ ժամա-նակ բնակում են Հաջիշէն գիւղում, եթէ եկեղեցու պէտք զգան կարող են տեղ խնդրել և նոր եկեղեցի կառուցանել։

—

Մայիսի 8· Տարւոյս Մարտի 12-ին թ· 2499 Կովկասու քաղաքա-կան մասի Կառավարչապետի դիւանատուն յայտնում է, ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ Ներքին Գործերի Պ· Նախարարի՝ ամենահպատակօրէն զե-կուցման համեմատ անցեալ փետրուարի 12-ին, որ Բարձրագոյն բարեհաճեցաւ կարգելու Երևանայ նահանգի ս· Թոմայ Առաքելոյ վանքի վանահայր Գրիգոր եպիսկոպոս Աղաւիրեանցին մինչև ընտ-րութիւն և հաստատութիւն Պատրիարք կաթուղիկոսի՝ Նախիջևա-նի և Բեսարաբիոյ թեմի առժամանակեայ կառավարիչ։ Այս Բարձ-րագոյն կամքը հաղորդուած է Ներքին Գործերի Պ· Նախարարից՝ կառավարչապետին։ Պ· Գեներալ ադիւտանտ Շերեմետեվի յանձնա-րարութեան համաձայն դիւանատունս պատիւ ունի ծանուցանել Սինօդիդ ի պատասխան նոյեմբերի 13-ին 1891 թւի 4173 համար առաջարկութեան։ Հրամայեցին։ Կովկասու Պ· կառավարչապետի դի-ւանատան գրութեան մասին զեկուցանել Գերապատիւ Գրիգոր եպիսկոպոս Աղաւիրեանցին և Բեսարաբիոյ Հայոց կոնսիստորիա-յին։

—

Մայիսի 11· Սինօդը ի նկատի ունելով Մայր Աթոռոյ Միաբան Մակար Ծ· վարդապետի երկար տարիներից հետէ դժուարակիր հիւանդութիւնը, ըստ վկայութեան բժշկի թոյլ է տրւում նորան գնալ Տփխիս բժշկուելու, իսկ Տփխիսի Հայոց կոնսիստորիային հրամայւում է հոգալ վիճակային արդիւնքից վարդապետի կարևոր ծախսերը թէ հիւանդանոցում և թէ արտաքոյ հիւանդանոցից

մինչև նորա էջմիածին դառնալը, իսկ ծախուց ցուցակը ներկայացնել Սինոդին։ Վանական կառավարութեանն ևս պատուիրւում է առանձին հրամանով գրել ծախուց տումարի մէջ, իսկ այստեղից մինչև Տփխիս տալ 50 ռուբլի։

—

Մայիսի 11. Սինոդը կարգում է բարեշնորհ Յովհաննէս վարդապետ Աշտարակեցուն ժողովելու Վաղարշապատի բնակիչներից ներկայ 1892 թուականի ծխահարկեր և այգեհարկերը, տալով ծխահարկի և այգեհարկի չորս ցուցակ 1892 թ. անցեալ տարիներից ապառիկ մնացածների տպած անդորրագրի ժապաւինած տետրակներով։ Պատուիրւում է, սովորութեան համաձայն թէ կալերի ժամանակ և թէ ուրիշ՝ աշխատել անթերի պահանջելու հարկերը և հետզհետէ ներկայացնելու Սինոդին, իսկ ընդհանուր հաշիւը տարուայ վերջը ցուցակների և ապահովագրերի արմատների հետ։

—

Մայիսի 11. Ապարանի Ալիքիւչակ գիւղացի Դաւիթ Ադամեանցը դատապարտուած լինելով տաժանակիր աշխատութեան քսան տարով, Սինոդը թոյլատրում է նորա ամուսնուն՝ Մարթա Պօղոսեանին իւր խնդրի համաձայն, և ըստ զօրութեան 45 և 50 յօդ. X հատոր I մասին օրինաց մտնել նոր ամուսնութիւն, այս մասին յայտնել յիշեալ Մարթա Պօղոսեանցին Ապարանի գործակալի միջոցաւ։

—

Մայիսի 11. Օշականի Ս. Մեսրոպեան ծխական եկեղեցական ուսումնարանի հոգաբարձութեան ներկայ տարւոյս Մարտի 3-ի յայտարարութեան համաձայն՝ Սինոդը թոյլ է տալիս նորան եկեղեցու դաւթում ձորակի ափում նոր ուսումնարանի շէնք կառուցանելու, առանց ձեռնամուխ լինելու Մայր Աթոռի շտեմարանին, որի վերայ շինուած է ծխական ուսումնարանը։

—

Մայիսի 16. Սինոդն Օշականի Աթոռապատկան այգին առանձին պայմանով տուել է կապալաւ նոյն գիւղի բնակիչ Անդրէաս

Ղուկասեանցին ինն տարի ժամանակով՝ տարւոյս փետրվար 1-ից մինչև 1900 թ. յունվարի վերջը՝ տարէն 350 ռուբլու՝ որ պարտաւոր էր վճարել իւրաքանչիւր տարի մարտ ամսի սկզբին։

—

Մայիսի 18. Շամախու թեմի առաջնորդ Գեր. Մեսրովբ Արքեպիսկոպոս յունվարի 10-ին համար 10 առաջարկութիւն է տալիս նոյն թեմի կոնսիստորիային թուելով նորա կահ կարասեաց և մի քանի անհրաժեշտ պիտոյից պակասութեանց մասին դիմել Սինոդին, և դոցա լրացնելու համար խնդրել Սինոդից 103 ռուբ. 80 կոպ. ծախուց լուծումն, որև թոյլ է տրւում Սինոդի կողմից կարևոր համարուած կահ կարասեաց համար ծախսել 103 ռուբ. 80 կ. վիճակային արդիւնքից՝ գրելով ըստ պատշաճին ծախուց տումարի մէջ։

—

Մայիսի 18. Կովկասի ճիւղի բարեգործական ընկերութեան՝ Երևանի վարչութիւն անցեալ ապրելի 9-ին թ. 8 խնդրագրով դիմում է Սինոդին, ընկերութեան սուղ միջոցները բարւոքելու և մասամբ հանրաշահ նպատակներին հասած լինելու ցանկութեամբ, խնդրում է ամենախոնարհաբար Սինոդից թոյլ տալ ընդմիշտ ունենալու Երևանի եկեղեցիներում կնքած գանձանակատուփերը, իսկ հանդիսաւոր և տօն օրերին ընկերութեան անդամների մէկի ձեռքով շրջեցնելու իրաւունք։ Սինոդը պատուիրում է Երևանի Հայոց կոնսիստորիային թոյլ տալ յիշեալ ընկերութեան վարչութեան կնքուած տուփեր դնելու եկեղեցիների դրան և այնպիսին արգելել ժողովրդեան մէջ շրջեցնելու։

—

Մայիսի 18. Սինոդը՝ Ս. Էջմիածնի միաբան Շնորհունակ Դպիր Գալուստ Տէր Մկրտչեանին բժշկի վկայականի համաձայն՝ չորս ամիս ժամանակով արձակուրդ տուեց գնալ արտասահման առողջանալու՝ տալով ճանապարհի և բժշկութեան համար ծախս 1500 ռուբլի։

—

Մայիսի 20. Տփխիսի կոնսիստորիայն միջնորդել էր Ղազախու

գաւառի Թովուզ գիւղացի Ղուկաս Տէր Յարութիւնեանցի համար որ ձեռնադրուի քահանայ Թովուզ գիւղի 92 տուն ժողովրդոց հովուելու, որովհետև Ղուկաս Տէր Յարութիւնեանցը կոչուած է զինուորական ծառայութեան և դեռ չէ լրացրած քան և հինգ տարին, այդ պատճառով Սինոդը Տփխիսի կոնսիստորիայի միջնորդութիւնը թողեց առանց հետևանքի՝ վերադարձնելով նորան Տէր Յարութիւնեանցի վկայականները:

—

Մայիս 20. Տփխիսի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն Սինոդը հրամայեց Ղազախու գաւառի Խաչթառակ գիւղացի Յարութիւն Ճուղուրեանցին նոյն և Մոլախեանց ձեռնադրել քահանայ տեղւոյն ժողովրդեան վերայ, որը աւարտել է իւր ուսման ընթացքը Ներսիսեան դպրանոցում:

—

Մայիսի 22. Սինոդը Մայր Տաճարի մոմավաճառ Մկրտիչ Տէր Մկրտչեանի յայտարարութեան համաձայն արձակեց նորան իւր պաշտօնից և նորա տեղ նշանակեց Վաղարշապատցի Գէորգ Վարդանեան Բունիաթեանցին՝ տալով նորան ժապաւինած մատեան՝ գրելու օրական մուտքը և հետղհետէ ներկայացնելու Սինոդին, իսկ տարուայ վերջը՝ ամբողջ ծախուց և մուտից հաշիւը տումարի հետ զննութեան համար:

—

Մայիսի 22. Սինոդը պատուիրում է Տփխիսի կոնսիստորիային թոյլ տալ Քարվանսարեցի Շողեր Վարդանեան Աւագեանցին մտնել նոր ամուսնութիւն, իւր այր Տաճկաստանցի Յարութիւն Հաջի Ասատուրեանցի տասնևհինգ տարուց ի վեր անյայտանալու պատճառաւ:

—

Մայիսի 29. Մայր Աթոռոյ փաստաբան Պ. Ռուբէն Հասան Ջալալեանցի ցուցման համաձայն, որովհետև անհնարին է ստանալ Երևանցի Յովհաննէս Եղիազարեանից բամբակի մեքենայի գնից մնացած ապառիկ մի հարիւր ռուբլին, քան տարի անցնելուց յետոյ, ուստի գործը համարել վերջացած և տալ դիւանատան պահեստ:

Մայիս 29· Սինոդը դարձնելով Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ կոնսիստորիային Եկատարինաւինի փիրալեանց քահանայի վատ ընթացքի մասին արած քննութեան թղթերը, պատուիրում է շուտով ուղարկել Սինոդ նոյն քահանային, իսկ Նոր Նախիջեւանի հոգեւոր կառավարութեան ենթադրութիւնը, վերաբերութեամբ նոյն աւանի դպրոցի հոգաբարձութեան ընտրութեան, եկեղեցու շինութեան, երեսփոխանի ընտրութեան եւ եկեղեցու 5000 րուբլին փոխ տալու վերաբերութեամբ՝ իսկութեամբ կատարել:

—

Մայիս 29· Սինոդը պատուիրում է Աղէքսանդրապոլի հոգեւոր կառավարութեան, նախ որ ստանայ փիրկելեանից 1890 հոկ 1 մինչեւ 1891 հոկ· 1· Աթոռապատկան կրպակների միամեայ վարձն 150 րուբլին եւ կալուածների արդեանց ժապաւինեալ տումարի հետ մատուցանել Սինոդին· եւ 1891 թուի հոկտեմբեր 1-ից մինչեւ նոյն ամսի վերջը վարձակալից պահանջել կրպակների վարձը· իսկ եթէ նա՝ փիրկելեանցը կամովին չվճարի, այն ժամանակ կառավարութեան նախագահը անդամները եւ քարտուղարը վճարեն իւրեանց սեպհականութիւնից, իւրեանց անհոգ գտնուելու համար պայմանը ճշդիւ չկատարելու վերաբերութեամբ· շուտով առնել վարձակալից կրպակները փայտեայ եւ երկաթեայ շինուածներով եւ սակարկութեամբ տալ ուրիշին վարձով եւ վարձի որքանութեան մասին յայտնել Սինոդին ի տնօրէնութիւն:

—

Մայիսի 29· Իգդիրի ծխակ· եկեղ· ուսումնարանի հոգաբարձութեան 1877 թուի մարտի 9-ի բողոքի համաձայն՝ Սինոդը հրամայում է 1888 թ· համ: 88 Սուրմալուի գործակալ Սամուէլ քահանային տեղեկանալ ուսումնարանի հաշուեմատենից, արդեօք Ստեփաննոս Աւագ քահանայ Տէր Թովմասեանցը յանձնե՞լ է հոգաբարձութեան 400 րուբլու մուրհակը· ամսիս 10-ին համար 82 յայտնում է, որ այդ մուրհակը Երեւանի նախկին թեմական Տեսուչ Պ· Պռօշեանցը ստանալով յանձնել է դպրոցի նախկին

հոգաբարձուներին և արձանագրուած է 1891 *Ապ. 8-ի ժապաւինեալ մատենի մէջ. ուստի Սինոդը հրամայում է վախճան դնել այդ գործին։*

—

Մայիսի 27. Սինոդը ի նկատի ունելով Ս. Էջմիածնի նախկին գանձապահ Գեր. Ներսէս Եպիսկոպոսի գրութիւնը՝ որով յայտնում է թէ արդէն ինքը գրել է իւր բարեկամ Պ. Ա. Աթտարբէկեանցին հասցնելու Սինոդին 2500 *րուբլին՝ իսկ մնացեալ պակասը ինքն կհոգայ։ Սինոդը մի քանի անգամ հրաւիրելով Պ. Աթտարբէկեանցին պահանջեց յիշեալ գումարը՝ բայց նա հակառակ իւր խոստման բացասելով չվճարեց. ուստի Սինոդը պատուիրում է յիշեալ Եպիսկոպոսին փութով հասցնել պակասած գումարը և անյապաղ լրացնել գանձարանի հաշիւը։*

—

Յունիսի 3։ Սինոդը ի նկատի առնելով Ս. Էջմիածնի փաստաբան Պ. Ռուբէն Հասան Ջալալեանցի յայտարարութիւնը հրամայեց Ս. Էջմիածնի վանական կառավարութեան տալ Պ. փաստաբան Հասան Ջալալեանցին 250 *րուբլի ճանապարհածախս գնալու վերին Հանդամէջ՝ Ունուս՝ Նորաշէն՝ Ապրակունիս և Արազետ եկեղեցական և վանքապատկան գիւղերի սահմաններ որոշելուն և հետազօտութիւններին ներկայ լինելու. ուր լինելու են Երեւանայ Նահանգական դատարանի անդամներից։ Այլ և պատուիրել Նախիջեւանի Հայոց Հոգեւոր կառավարութեան ստանալ այդ կալուածներից շահւող եկեղեցիներից և վանքերից* 250 *րուբլին և դարձնել Սինոդին Պ. փաստաբանին վճարուած ճանապարհածախսի փոխարէն։*

—

Յունիսի 3. Սինոդը արձակելով բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետին Մայր Աթոռի գանձապահութեան պաշտօնից՝ կարգեց նորա տեղ Սինոդի անդամ բարձրապատիւ Վահան վարդապետ Տէր Գրիգորեանցին։

—

Յունիս 5. Սինոդը սակարգութեամբ վանքապատկան վերին

Ջրաղացը տուեց վարձով Նազար Թարխանեանցին 3 տարի ժամանակաւ, տարեկան 301 րուբլի 50 կոպ. վարձով որ պարտաւոր է վճարել կանխիկ Ապրիլ ամսի սկզբին։

—

Յունիսի 5. Սինօդը հրամայեց Երեւանի Հայոց կոնսիստորիային թոյլ տալու Մարգարա գիւղացիներին շինել աղօթատուն եկեղեցական օրէնք եւ ժամերգութիւն կատարելու համար, մինչեւ կյաջողի նոցա նոր եկեղեցու շինութիւնը, հինը Երասխի յորդանալով ողողուած լինելու պատճառաւ։

—

Յունիս 5. Ըստ յայտարարութեան Վրաստանի Գեր. Մամբրէ Եպիսկոպոսի անցեալ տարուայ Յուլիս 23 համարաւ 171 Սինօդը պատուիրեց Էջմիածնի կալուածների կառավարչին տալ Նորին Սրբազնութեան Մամբրէ Եպիսկոպոսին 500 րուբլի, որը նա տուել էր ճարտարապետ Շտերնի ի հաշիւ նորա հաղար րուբլի վարձին, իսկ նորանից առաջարկուած Ս. Էջմիածնի Տաճարի նորոգութեան եւ միւս շինութեանց ծրագիրը մատուցանել Սինօդի Ատենապետի Ամենապատիւ Տէր Տեղակալին պահպանութեան համար, մինչեւ Նորընտիր Հայրապետի գալուստը։

—

Յունիսի 5. Սինօդը վերադարձնելով Նորին Գերազանցութեան կարապետ Եզեանցին հանգուցեալ Սանասարեանցի մահարձանի նախագիծը, յայտնեց միանգամայն նորա անյարմարութիւնը, եւ հրաւիրեց նորին գերանցութեան ուշադրութիւնը մահարձանի նոր նախագիծ կազմելու համար, որի բարձրութիւնը պիտի լինի ոչ աւելի քան երեք արշին եւ ուղարկել Սինօդին։

—

Յունիսի 8. Ներքին գործոց Նախարարը ուղարկելով Նոր Նախիջեւանցի Թագուհի Իզմայիլեանցի յանուն Նորին կայսերական Մեծութեան տուած խնդիրը, առաջադրում է Սինօդին տալ բացայատ տեղեկութիւն Նախարարութեան նորա պսակի լուծման ուշացնելու մասին։ Որովհետեւ պսակի լուծումն իբրեւ զուտ հոգեւոր գործ, Սինօդի իրաւասութիւնից վեր է եւ կախուած ամե-

նայն Հայոց կաթուղիկոսի անօրէնութիւնից. այդ պատճառաւ Թագուհի Իզմայիլեանցի իւր այր Թորոս Իզմայիլեանցից անջատուելու խնդիրը թողնել մինչև նորընտիր Հայրապետի գահակալութիւնը, որի համար յայտնեց Ներքին գործոց Նախարարին և տուեց տեղեկութիւն Բեսարաբիայի Հայոց կոնսիստորիային ծանուցանելու աղերսակուին:

—

Յունիսի 10. Սինոդի գործերից տեսնւում է, որ Նուխու փոխանորդութեան մէջ շատ տարիներից հետէ եկեղեցական գրքերի, հոգևոր տուրքերի, Արարատի բաժանորդագների մեծ քանակութեամբ ապառիկ է մնում, այլև հաւատարիմ աղբիւրներից հասնում են լուրեր Սինոդին, պսակների գործերում զեղծմանց մասին, և վիճակային արդեանց գաղելու՝ տեղւոյն հոգևոր կառավարութեան պաշտօնեաների և քահանայից ձեռքով Սինոդը՝ Նուխու նախկին փոխանորդ (այժմ Սինոդի անդամ) Վահան վարդապետ Տէր Գրիգորեանից պահանջեց տեղեկութիւն, և հասու եղաւ, որ նա այնտեղ եղած ժամանակ սկսել էր հետազօտել և քննել գործուած եղծմունքները, բայց չէ աւարտել: Սինոդը յանձնեց բարձ. Վահան Վարդապետին շուտով գնալ Նուխի և շարունակել քննութիւնն ու մանրամասն բացատրութեամբ ներկայացնել Սինոդին:

—

Յունիսի 12. Սինոդը Երևանի կոնսիստորի յունիսի 28ից համար 2737 յայտարարութեան համաձայն հրամայեց տեղւոյն Թեմակալի փոխանորդին ձեռնադրել քահանայ Յովհաննէս Տէր Գրիգորեանցին Տաթևու Շենաթաղ գիւղի վերայ և վկայականը մատուցանել Սինոդին ի հաստատութիւն:

—

Յունիսի 12. Ղարաբաղի Հայոց վիճակային կոնսիստորի Յուլիս 5-ին համար 911 յայտարարութեան համաձայն, Սինոդը Ջիբրայէլ գաւառի Յոր գիւղացի Մելքիսեդէկ Հայրապետեան Փօղոսեանցին պատշաճաւոր իշխանութեան թոյլտւութեամբ հարկից ազատելով՝ հրամայեց Ղարաբաղի կոնսիստորին ընդունել

յիշեալ Պօղոսեանցին հոգևորականութեան շարքում և կարգել սպասաւոր նոյն գիւղի եկեղեցւոյն։

—

Յունիսի 12. Սինօդը մերժեց Երևանի Հայոց կոնսիստորի Նարըմջեցի Առաքել Մելիք Խաչատրեանցի ձեռնադրութեան մասին արած միջնորդութիւնը, նորա թերուսումն լինելու պատճառաւ. բայց որովհետև արդէն մելիք Խաչատրեանցը ազատուած է հարկից, պատուիրեց կոնսիստորին նորան ընդունել հոգևոր տեսչութեան մէջ, Նարմջայ գիւղի եկեղեցուն սպասաւորելու համար։

—

Յունիսի 12. Սինօդը Սոլակեցի Յարութիւն Տէր Մովսէսեանցի քահանայ ձեռնադրելու համար Երևանի Հայոց կոնսիստորի արած միջնորդութիւնը մերժեց նորա թերուսումն լինելու պատճառաւ, բայց որովհետև Տէր Մովսէսեանցը արդէն ազատուած է հարկից, պատուիրեց ընդունել հոգևոր տեսչութեան մէջ և կարգել նոյն գիւղի եկեղեցուն սպասաւոր։

—

Յունիսի 12. Սինօդը ըստ յայտարարութեան Տփխիսի Հայոց կոնսիստորի յանձնեց վիճակաւոր Առաջնորդ Գեր. Մամբրէ եպիսկոպոսին ձեռնադրել քահանայ Մեհրապ Գէորգեան Մեհրապեանցին Մցխեթի և մերձակայ գիւղերի ժողովրդեան հովուելու, Զաքարիա Տէր-Սարգսեան Տէր-Գէորգեանց Խոշխօթան և Բաղանիս գիւղերի, Նիկողայոս Յարութիւնեան Տէր-Սարգսեանցին Դանդաւոր գիւղի, Ստեփաննոս Մկրտչեան Մելիքեանցին Բանանց գիւղի, Յովհաննէս Ամիրղանգիւլեանցին Դումանիս և նորան կից գիւղերի և ձեռնադրութեան վկայականները մատուցանել Սինօդին հաստատութեան համար»։ Սորանից երկուսը սովորել են Տփխիսի և Երևանի թեմական դպրանոցներում, իսկ երեքը ըստ հարցաքննութեան բաւարար են գտնուած։

—

Յունիսի 12. Մայր աթոռի Միաբան Շնորհունակ Գարեգին Սարկաւագին Ամենապատիւ Տէր Տեղապահի առաջադրութեան համա-

ձայն Սինոդը թոյլ տուեց գնալ արտասահման ուսանելու Աստուածաբանութիւն կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ծախսով:

—

Յունիսի 12. Ըստ միջնորդութեան Աստրախանի Հայոց կոնսիստորի Սինոդը պատուիրեց կոնսիստորին թոյլ տալ Գասպինցեանց երեսփոխանին եկեղեցական 925 ռուբլով անել կարևոր և անհրաժեշտ վերանորոգութիւններ Ս. Պետրոս, Պօղոս և Լուսաւորիչ եկեղեցիներում:

—

Յունիսի 12. կոնսիստորիայն Հայոց Աստրախանի միջնորդելով Սինոդին, խնդրում է Նիժնայի հայոց եկեղեցու երեսփոխան Ղազարոս Եզեանցի ջերմեռանդ և արդիւնաւոր ծառայութեան համար միջնորդել վարձատրելու օրհնասահման պարգևով: Որովհետև Ղազարոս Եզեանց արդէն վարձադրած է ոսկեայ և արծաթեայ մետալներով և Տէրութեան օրէնքում չկայ ուրիշ հրահանգ, որով Սինոդը կարողանայ միջնորդել վարձադրելու շքանշանով, ուստի Սինոդը մերժեց կոնսիստորի միջնորդութիւնը:

—

Յունիսի 12. Ըստ յայտարարութեան կոնսիստորի վիճակին Հայոց Շամախու, Սինոդը յանձնեց վիճակի Առաջնորդ Գեր. Մեսրովբ Արք-եպիսկոպոսին ձեռնադրել քահանայ Յովհաննէս Նազարեանցին և Թադէոս Տէր-Առաքելեանցին, առաջինը Գեօքչայ գիւղաքաղաքի հայ ժողովրդեան հովուելու, իսկ միւսը Հնդարի, Կիւրտայի և Նորաշէնի ժողովրդեան:

—

Յունիսի 12. Սինոդը Ղարաբաղի կոնսիստորի միջնորդութեան համաձայն Բարսեղ Մելքիսեդէկեանցի, Յակոբջան Գրիգորեանցի, Յովսէփ Սարգսեանցի և Ջումշուտ Տէր Յովհաննէսեանցի մասին, որք ըստ հանգամանաց տեղերի ունին բաւարար ուսումն, հրամայեց նոյն թեմի վիճակաւոր Առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազեանցին ձեռնադրել նոցա քահանայ և վկայականները ղրկել Սինոդին հաստատելու:

Յունիսի 12· Սինօդը կարսի դպրոցի Ջայնագրութեան ուսուցիչ Սարգիս Քոթանջեանցին պաշտօնաւոր իշխանութեան միջոցաւ ազատելով հարկատուութիւնից, պատուիրեց Երևանի կոնսիստորին ընդունել նորան հոգևոր տեսչութեան մէջ և կարգել Դարս քաղաքի Ս· Աստուածածին եկեղեցւոյն սպասաւոր։

—

Յունիսի 12· Սինօդը յանձնեց Երևանի թեմակալի փոխանորդին — Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանցին՝ ձեռնադրել քահանայ Յարութիւն Պօղոսեանցին Քէշլի գիւղի վերայ, Մանուկ Տէր-Օհանեանին Ղուլալի գիւղի վերայ, Իսահակ Տէր-Գրիգորեանցին Աստապատ գիւղի վերայ, Առաքէլ Տէր-Յարութիւնեանցին Համզաչիման գիւղի վերայ, Մկրտիչ Տէր-Սիմէօնեանին Ագարակ գիւղի վերայ և Յովհաննէս Տէր-Գրիգորեանին Նորաշէն գիւղի վերայ, և ձեռնադրութեան վկայականները ներկայացնել Սինօդին հաստատութեան։

—

Յունիսի 12· Սինօդը Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ Հայոց կոնսիստորի համարաւ 2312 յայտարարութեան Ալիմի և Բաղչասարայցի պահեստի զինւոր Բարապ օղլի Սիլիմովի խնդրի համաձայն՝ ուղարկելով վերոյիշեալի խնդիրը և վկայականը Ներքին Գործոց Նախարարին, խնդրում է թոյլ տալ նորան մկրտել ըստ արարողութեան Հայաստանեայց ս· եկեղեցւոյ, նորա ցանկութեան համաձայն։

—

Յունիսի 17· Սինօդը արժան դատելով կարգադրեց, որ, նախ՝ այսուհետև, ինչպէս քաղաքներում նոյնպէս և գիւղերում ուր կլինի ոչ պակաս հարիւր տանից, ընտրուեն և կարգուեն թեմ· հոգևոր դպրոցներում և Մայր Աթոռի ճեմարանում աւարտողներից և այդպիսիներին փոքր ի շատէ ապրուստի ապահովութիւն տալու համար, գիւղերում· ուր բնակչաց թիւը կլինի 159 տուն, կարգուի մի քահանայ և որչափ ձեռնհաս կլին հովուելու իւր ժողովրդին, ուրիշը չձեռնադրել իբրև ընկեր· իսկ այն գիւղերում, ուր կլինի 250—300 տուն կարգուի

երկու քահանայ: Այն գիւղերում, որոնց բնակիչների թիւը հարիւրից պակաս կլինի, բայց ոչ վաթսունից նուազ, կըկարգուեն թեմական դպրոցների 4-*րդ և* 5-*րդ դասարանների կրթութիւն ունեցողներ, իսկ եթէ ոչ, այնպիսիներ, որոնք ինքնակրթութեամբ ձեռք բերած կլինին քահանայապատշաճ հըմտութիւն, այսպիսիներին ևս որոշելու է զգուշաւոր քննութեամբ, որը պարտաւոր են անել վիճակների Առաջնորդները և կոնսիստորիաների անդամները: Երևանայ թեմի քահանայացուները միայն քննուելու են Սինոդում:*

Իսկ այն գիւղերում, որի բնակչաց թիւը 50*ից պակաս է, եթէ վերոյիշեալներից ցանկացողներ գտնուին, կձեռնադրուին, իսկ եթէ ոչ, հարցաքննութեան համեմատ: Հրամայեցին. Պատուէր տալ Գերապատիւ Առաջնորդներին, Հայոց Վիճակային կոնսիստորիաներին, քահանայացուների համար վերև յիշուած կարգադրութիւնները ճշդիւ կատարել և հակառակ դորա, այսուհետև առաջարկութեամբ չդիմել Սինոդին:*

—

Յունիսի 17. *Սինոդը անցեալ տարուայ Նոյեմ.* 18-*ից Սինոդի կառավարչական մասի գործառնութեանց հսկողութիւն յանձնել էր սորա անդամ Գեր. Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանցին, որ նա բոլոր կարևոր գործերը առանձին ուսումնասիրելով՝ զեկուցանի Ատենակալներին որոշումն տալու համար: Նորին Սրբազնութիւնը մինչև հիմա այդ յանձնարարութիւնը կատարելով հրաժարում է նոյն պարտաւորութիւնից և խնդրում է ազատ կացուցանել իրան: Հրամայեցին. Գեր. Սեդրակեան Արիստակէս Եպիսկոպոսին Սինոդի կառավարչական մասի գործառնութեան հսկողութիւնից ազատ համարել և տալ տեղեկութիւն Նորին Սըրբազնութեան:*

—

Յունիսի 17. *Սինոդը վանական կառավարութեան համարաւ* 87 *յայտարարութեան համաձայն հրամայեց Մայր Աթոռի Գանձապահին յանձնել նոյն կառավարութեան՝ միաբանութեան սենեակների շինութեան ծախուց համար* 4000 *րուբլի, որ անցեալ Ապրիլ և*

Մայիս 5000 րուբլի ստացած գումարի հետ կանէ 9000 րուբլի։

—

Յունիսի 17. Սինոդը՝ վանական կառավարութեան թ. 86 յայտարարութեան համաձայն հրամայեց Մայր Աթոռի գանձապահին տալ Յունիս ամսի՝ Աթոռի և ճեմարանի ծախուց համար 8000 ռուբլի, որ անցեալ հինգ ամիսներում ստացած 42000 ռուբլի ծախուց հետ կանէ 50,000 ռուբլի։

—

Յունիսի 17. Սինոդը ի նկատի առնելով Երևանի թեմակալի փոխանորդ Գեր. Գրիգոր եպիսկոպոսի յայտարարութիւնը, Յուլիս ամսից նորա ռոճկի վերայ աւելացրեց այլ ևս 200 ռուբլի։

—

Յունիսի 17-ին Սինոդի հրամանով արձակուած են իւրեանց պաշտօնից Ալէքսանդրապօլի հոգևոր կառավարութեան անդամ Մարտիրոս քահանայ Տէր-Պօղոսեանցը և քարտուղարը։ Որովհետև հոգևոր կառավարութիւնը չորս անհիմն յայտարարութիւնով խոյս է տալիս 1891 թուի իւղի և պանրի արդեանց տումարի ուղարկելու մասին՝ Սինոդի հրամանների կատարումից։ Տէր-Պօղոսեանցը համարւում է զանցառու իբրև բոլոր գործառնութեանց քաջ ծանօթ, իսկ քարտուղարը օրէնքի համեմատ իբրև պատասխանատու կարգապահութեան և գրագրութիւնների ճշտութեան։ Իսկ, թէ՝ 1889 - 1891 թիւը երեք տարուայ ընթացքում կանոնաւոր կերպով ընդունուա՞ծ վիճակային արդիւնքները, առանձին զեկուցումով քննութիւն նշանակել։ Իսկ հոգևոր կառավարութեան նախագահ բարեշնորհ Գարեգին վարդապետին պատուիրել գտնելու այդ. տումարները և մատուցանելու Սինոդին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Վարչութիւն հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյ ծանուցանէ ի գիտութիւն ամենեցուն զյետագայս.

1. Ի Դպրոցական դասարանս ճեմարանիս ընկալեալ լինին թէ ուսեալքն ի թեմական և ծխական եկեղեցական դպրոցս և թէ պատրաստեալքն առտնին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան աւարտողք զընթացս ուսման թեմական Դպրոցաց:

2. Յայսմ ամի ի դպրոցական դասարանս չկարեն ընկալեալ լինել աշակերտք յայնց տեղեաց, յորոց արդէն բազումք են ի ճեմարանիս. — յԱլէքսանդրապոլէ, յԱխալցխայ, ի Դուրիժոյ (քաղաքէն), ի Կարուց, ի Վաղարշապատայ, ի Դզլարէ (ի քաղաքէն), ի Շուշւոյ) (ի քաղաքէն), ի Թիֆլիսէ (ի քաղաքէն), յՕշականայ, ի Մեծ Սալայ և ի Թոփտի գեղից, Նոր-Նախիջևանի և ի Մեղրի գեղջէ: Իսկ աւարտեալքն զլիուլի դասընթացս թեմական դպրոցաց ընկալեալ լինին յառաջին լսարան:

3. Ցանկացողք ի մտանել յաշակերտութիւն ճեմարանիս մատուցանեն զխնդիր յանուն Ամենապատիւ Տէր Տեղակալի ց25 Օգոստոսի, առաջի առնելով ընդ նմին զվկայագիրս ծննդեան, պատուաստման ծաղկի և ուսման այնր դասարանի թեմական կամ ծխական եկեղեց. Դպրոցի, ուստի խնդրատուն իցէ:

4. յԳ-րդ դասարան մտանեն պատանիք 14—16 ամեայք, ըստ այսմ համեմատութեան և ի յաջորդ դասարանս:

5. Աշակերտք ընկալեալ լինին ի դասարանս ըստ հարցաքննութեան: Վասն մտանելոյ յԳ-րդ դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երկդասեան եկեղեցական ծխական Դպրոցաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս—պատշաճ նոցին ուսումն ըստ ծրագրոյ, հաստատելոյ ի պէտս թեմական Դպրոցաց:

6. Ցանկացողք մտանելոյ յառաջին լսարան հարցաքննին՝ 1. յընդարձակ եկեղեցական պատմութիւն, 2. յընդարձակ Քրիստոնէական վարդապետութեան եկեղեցւոյ Հայոց, 3. ի ծանօթութեան Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց, 4, ի լեզուս Հայոց, Ռուսաց և ի Ֆրանսիականին:

7. Ընկալեալքն ի հարցաքննելոց յաշակերտութիւն ճեմարանիս կանխաւ մատուցանեն ի գրաւ զ50 րուբլիս, եթէ եկեալ են ի կովկասեան կողմանց. իսկ ի հեռաւոր և յարտասահման վիճակաց եկեալքն՝ զ75 րուբլիս. որպէս զի հատուսցի նոցա այդ գումար ի ծախս վերադարձի ի հայրենիս եւս և ի գին կորուսեալ և վատնեալ գրոց և այլոց իրեղինաց. ըստ այսմ վարին և աշակերտք ճեմարանիս, որք ցարդ չեն մատուցեալ զայդ գումար:

8. Բաց ի ձրիավարժից ընկալեալ լինին ի ճեմարանն նաև թոշակաւորք: Իւրաքանչիւր թոշակաւոր վճարէ ի տարին երկու հարիւր րուբլիս, յերկուս նուագս՝ ի Սեպտեմբեր և Յունվար ամիսս:

9. Թոշակաւոր աշակերտք ճեմարանիս, որոց չև ևս է հատուցեալ զթոշակ անցելոյ ամի պարտին մատուցանել զայնս ի վերադարձի իւրեանց, որպէս և վասն առաջիկայ ուսումն կիսամեակի:

10. Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակեսցի ի ճեմարանէ մինչև իցէ բոլորեալ կիսամեակին վճարելոյ, թոշակ նորա ոչ դարձուսցի յետս:

Տեսուչ ճեմարանի՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Մայր Աթոռի Ուսումնարանական վարչական Յանձնաժողովը ծանուցանում է ի գիտութիւն եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որ Յանձնաժողովիս գործերում գտնուած բոլոր վկայականները՝ ուսման, ուսուցչութեան իրաւանց և ծննդեան շուտով ուղարկուելու են վիճակների թեմական վերատեսուչներին, իսկ ուր այդպիսիք չկան, վիճակային կոնսիստորիաներին՝ տէրերին յանձնելու համար. իսկ նոքա, որոնք այժմ ուսուցչական պաշտօնում չեն՝ հրաւիրւում են յայտնել Յանձնաժողովիս իրանց հասցէն։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ

ԱՒԵՏԱՐԱՆՔ

ԻՒՂԱԲԵՐԻՑ, ՀԱՆԳՍՏԵԱՆ, ԲԺՇԿՈՒԹԵԱՆ, ՏԱՃԱՐԻ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ։

փառակազմ գինն է 1 ռուբլի։

ՎԱՃԱՌՒՈՒՄ Է ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՏԵԱՆՆԵՐՈՒՄ

Գրաբառ, փոքրադիր, փառակազմ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ.

Կարելի է գնել և Տպարանական Ժողովին այս հասցէով. Эчміадзинъ. Типографическій Комитетъ.

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ, ՀԱՆԳԱՆԱԿԻՆ ՀԱՒԱՏՈՑ

ԵՒ

ԵՐԱՆՈՒԹԵԱՆՑ

ԳՐԵՑ

ԴՊԻՐ ՍՐԱՊԻՈՆ ԲԱՑԲՈՒՐԳՑԵԱՆ.

Գինն է 35 կոպէկ.